Հաստատված է

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2022 թվականի հրամանով

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Բովանդակություն

Ներածություն 3
1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 4
2 ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 7
3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 33
4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 44
5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՁԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 51
6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ 59
7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ 66
7.1. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 68
8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 70
9. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 74
10. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 82

Ներածություն

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Տեսչական մարմնի խնդիրներն են քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում:
Իր առջև դրված խնդիրները կարգավորելու նպատակով Տեսչական մարմինը 2021 թվականի ընթացքում հետևողականորեն իրականացրել է «ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» 11.06.2018թ. թիվ 730-Լ ՀՀ վարչապետի որոշմամբ իրեն վերապահված և 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված գործառույթները:

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված ժամկետներում և նախատեսված ծավալով կատարվել են հետևյալ միջոցառումները՝

✓ էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մոտ (մասնաճյուղերում) և իրենց պատկանող էներգատեղակայանքներում տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների իրականացում բացառությամբ այն օբյեկտների, որոնց գործունեությունը դադարեցվել է.

✓ Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների (մասնաճյուղերում) և իրենց պատկանող էներգատեղակայանքների վերաբերյալ տվյալների բազաների ձևավորում.

✓ Ստուգված տնտեսավարող սուբյեկտների հրդեհային և տեխնիկական անվտանգության վերաբերյալ տվյալների բազաների ձևավորում.

✓ ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին թիվ 1025-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը.

✓ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը.

✓ մանկական ամառային ճամբարներում հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում.

✓ նախակրթական հաստատություններում հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում.

✓ Տարեկան ծրագրում ներառված մարզպետարանների աշխատակազմում տեսչական ստուգումների իրականացում.

✓ մասնակցություն Տրանսպորտի վերահսկողության մասին ՀՀ օրենքի նախագծի մշակմանը.

✓ ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11–ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 730-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը.

✓ Տեսչական մարմնի ղեկավարի, ղեկավարի տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների հետ հարցազրույցների կազմակերպում և անցկացում.
✓ թեժ գծի սպասարկում.
✓ սոցիալական ցանցերում պաշտոնական էջերի տեղեկատվական սպասարկում.
✓ պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկում.
✓ YouTube-ի պաշտոնական ալիքի համալրում և սպասարկում.
✓ Տեսչական մարմին ստացված դիմում-բողոքների, վարչական վարույթների, ահազանգերի, հարցումների (թեժ գծով և գրավոր) վիճակագրության վարում, ամփոփում, հրապարակում.
✓ ոլորտային իրազեկող և կանխարգելիչ բնույթի սոցիալական հոլովակների, մամուլի հաղորդագրությունների պատրաստում և տարածում.
✓ իրազեկում-հանդիպումների կազմակերպում Երևանում և ՀՀ մարզերում՝ մարզպետարանների, համայնքների ներկայացուցիչների, տնտեսվարող սուբյեկտների հետ՝ Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրները կարգավորելու, հետագայում դրանք բացառելու և կանոնակարգելու նպատակով.
✓ ԶԼՄ-ներում տեղ գտած վերահսկողության ոլորտին առնչվող և հանրային հետաքրքրություն առաջացնող հրապարակումների մշտադիտարկում, հայտնաբերված հրապարակումների վերաբերյալ արագ արձագանքում (պատասխանատուների կողմից պատասխանի, հերքման և/կամ պարզաբանման ստացում և տարածում).
✓ Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների տրանսպորտի անվտանգության հարցերով դասընթացների կազմակերպում՝ տեսակոնֆերանսի միջոցով:

Տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումները կատարվել են ոչ ամբողջ ծավալով կամ ուշացումով.

✓ ուղևորափոխադրում իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մոտ նախատեսված ստուգումների իրականացումը.
✓ արտադրական նշանակության օբյեկտներում, բենզալցակայաններում, գազալցավորման կայաններում, առևտրի և հասարակական սննդի օբյեկտներում, պայթուցիկ նյութերի, նավթամթերքի, հեղուկ և բնական գազերի պահեստներում տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների իրականացում (բացառությամբ սնանկ ճանաչված կամ չգործող օբյեկտների).
✓ քաղաքաշինական տեսակետից առավել ռիսկային օբյեկտներում ստուգումների իրականացում.
✓ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը.
✓ Տեսչական մարմնի վերահսկողությամբ արձանագրված իրավախախտումների արձանագրությունների, կարգադրագրերի լրամշակում ըստ ոլորտների:

2021 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումները տեղափոխվել են 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիր.

- ✓ Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը.
- ✓ ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1933-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը.
- ✓ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ» թիվ 95-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը.
- ✓ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2399-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը.
- ✓ ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1939-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը.
- ✓ ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը ՀՀՇՆ 30-10-2014 «Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը.
- ✓ Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը.
- ✓ Տեսչական մարմնի ղեկավարի, ղեկավարի տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների հետ մամուլի ասուլիսների կազմակերպում և անցկացում.
- ✓ խորհրդատվական նյութերի և/կամ իրազեկման բուկլետների և բրոշյուրների կազմում, ձևավորում՝ ֆինանսավորման բացակայության պատճառով.
- ✓ ՀՀ ԲՈՒՀերի, դատարանների, այլ կառույցների հետ համագործակցության շրջանակում վերապատրաստումների կազմակերպում։

2 ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

Տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրով տրանսպորտի բնագավառում նախատեսված էր 34 ստուգում 2020 թվականին՝ 30 ստուգում, 2019 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից տրանսպորտի բնագավառում ստուգումներ նախատեսված չեն եղել, սակայն պայմանավորված այն հանգամանքով, որ հայտարարված արտակարգ դրության հետևանքով կասեցվել էին միջպետական ուղևորափոխադրումները, այդ բնագավառում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները ստուգման չեն ենթարկվել: Արդյունքում ավարտվել է 22 ստուգում (2020 թվականին՝ 16 ստուգում, որից 1-ը հրդեհային ոլորտի հետ համատեղ), ինչը կազմում է նախատեսված քանակի 64,7%-ը (2020 թվականին՝ 53%-ը):

Ստուգումների ընթացքում բացահայտվել է 77 խախտում (2020-ին՝ 63 խախտում), որոնցից առավել կրկնվողներն են.

- *երթուղու չվացուցակով սահմանված մեկնման ժամերի պահպանման պահանջի խախտումներ – 10 տնտեսավարող սուբյեկտի մոտ (2020-ին՝ 8 խախտում),*
- *փոխադրումներ իրականացնողի այլ տեսակի վառելիքով շահագործվող տրանսպորտային միջոցը շահագործվում է առանց ճնշափորձարկման վկայագրի– 8 տնտեսավարող սուբյեկտի մոտ (2020-ին՝ 5 խախտում),*
- *երթուղային ցանցը կազմակերպող համապատասխան մարմնի հետ համապատասխան պայմանագրի բացակայություն – 7 տնտեսավարող սուբյեկտի մոտ (2020-ին՝ 1 խախտում):*





Ստուգումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտներին տրվել է 19 կարգադրագիր: Ստուգված կազմակերպություններից երեքում խախտումներ չեն արձանագրվել (2020-ին՝ 1 կազմակերպությունում):

Հաշվետու ժամանակահատվածում 22 կազմակերպություններում իրականացվել են վերստուգումներ (2020-ին՝ 10 կազմակերպությունում)։





Վերստուգումների արդյունքում պարզվել է, որ ստուգումների ընթացքում հայտնաբերված 77 խախտումներից կազմակերպությունների կողմից վերացվել են 45-ը (58.4%-ը)։ 2020 թվականին 63 խախտումներից կազմակերպությունների կողմից վերացվել են 54-ը (85.7%-ը)։



Տեսչական մարմնի կողմից իրականացված բոլոր ստուգումները (100%) նախատեսված են եղել տարեկան ծրագրով։

1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3.9 օր (2020-ին՝ 5.4 օր), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր։ Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 2.1-ը (2020-ին՝ 2.9-ը)։

1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 2.1 օր (2020-ին՝ 2.1 օր), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր։ Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 2.1-ը (2020-ին՝ 2.3-ը)։

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում

Տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրով էներգետիկայի և էներգասպառման բնագավառում նախատեսված էր 128 ստուգում: Հաշվետու տարվա ընթացքում տուգումներ են իրականացվել են 102 տնտեսավարող սուբյեկտի 110 օբյեկտներում (նախատեսված ընդհանուր քանակի 85.94%), որից 18-ը չի ստուգվել՝ չգործելու պատճառով: Միաժամանակ իրականացվել է 52 վերստուգում:

2020 թվականի տարեկան ծրագրով նախատեսված 227 ստուգումից, COVID-19 համավարակով պայմանավորված ստուգվել էր ընդամենը 73 տնտեսավարող սուբյեկտի 102 օբյեկտ (նախատեսված ընդհանուր քանակի 44.93%): Իրականացվել էր 5 վերստուգում:

2020-2021 թվականների ստուգումների և վերստուգումների գրաֆիկական պատկերներն ըստ մարզերի բերված են ստորև.









2021 թվականի ընթացքում միայն ստուգումների արդյունքում արձանագրվել է 1579 խախտում (2020թ.՝ 974 խախտում), որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.





2021 թվականին իրականացված ստուգման ընթացքում **2** օբյեկտում թերություններ չեն հայտնաբերվել, դրանք են. Արարատի մարզում՝ ԴԵՅՎ ՍՊԸ և Երևանում՝ ԷԼ ՋԻ ՍՊԸ: 2020 թվականին թերությունների բացակայության վերաբերյալ կազմվել է 8 տեղեկանք:

2021 թվականին իրականացված 52 և 2020 թվականի 5 վերստուգումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2 տարիների ընթացքում գրանցված խախտումների ընդհանուր քանակը նվազել է 13%-ով 332 խախտում վերացվել է:



Վերստուգումների արդյունքում թերությունների բացակայության վերաբերյալ կազմվել է 26 տեղեկանք (2020թ.՝ 3 տեղեկանք):

Ստուգումների և վերստուգումների արդյունքում կազմվել և տնտեսավարող սուբյեկտներին է տրամադրվել պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 134 կարգադրագիր (2020թ.՝ 94 կարգադրագիր):



Տեխնիկական ստուգումների ընթացքում <u>տնտեսավարող սուբյեկտների</u> 102 օբյեկտներում (2020թ.՝ 95 օբյեկտ) (կամ դրանց մասնաճյուղերում) բացահայտվել է 562 խախտում (2020թ.՝ 434 խախտում), ինչը կազմում է բացահայտված բոլոր 1579 խախտումների՝ 35.6%-ը (2020թ.՝ ընդհանուր 974 խախտումների՝ 44.5%-ը):

Հիմնական խախտումները վերաբերում են.

- *գազի տնտեսության շահագործման, սպասարկման և վերանորոգման հատուկ հրահանգների առկայությանը - 59 դեպք (2020թ.՝30 դեպք),*
- *կազմակերպության գազի տնտեսությունները շահագործող ինժեներատեխնիկական անձնակազմի (ԻՏԱ), գազավտանգավոր աշխատանքներ իրականացնող ԻՏԱ, գազամատակարարման օբյեկտների շինարարությունն իրականացնող շինմոնտաժային կազմակերպությունների ԻՏԱ գիտելիքների ստուգման կազմակերպմանը – 58 դեպք (2020թ.՝43 դեպք),*
- *գազավտանգավոր աշխատանքներ իրականացնող աշխատակիցների, այդ թվում՝ նաև եռակցողների, գիտելիքների ստուգման կազմակերպմանը – 55 դեպք (2020թ.՝41 դեպք),*
- *գազատար խողովակների համապատասխանությանը ազգային ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին – 49 դեպք (2020թ.՝25 դեպք),*
- *գազավտանգավոր աշխատանքների կարգագրմանը – 32 դեպք,*
- *գազատարի ամրության և կիպության փորձարկման աշխատանքներին, որոնք գրանցվում են շինարարական տեղեկաթերթիկում և հաստատվում - 32 դեպք:*

Վերստուգվել է (ըստ գործունեության բնագավառի) 50 օբյեկտ, որի արդյունքում տնտեսավարող սուբյեկտներում խախտումների քանակը նվազել է 64.7%-ով (2020թ.՝ 5 օբյեկտ, արդյունքում նվազել է 76.2%-ով):

<u>Գազաբաշխման և գազասպառման միջին և բարձր ճնշման</u> 97 էներգատեղակայանքներում (2020թ.՝ 51 էներգատեղակայանք) բացահայտվել է 821 խախտում (2020թ.՝ 435 խախտում), ինչը կազմում է բացահայտված բոլոր 1579 խախտումների՝ 52%-ը (2020թ.՝ ընդհանուր 974 խախտումների՝ 44.7%-ը):

Հիմնական խախտումներն են.

• *գազատարների տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման անվտանգ մեթոդների հրահանգների բացակայությունը – 59 դեպք (2020թ.՝34 դեպք),*

• *գազատարների տեխնիկական սպասարկման աշխատանքների արտադրական տեխնոլոգիական հրահանգների բացակայությունը – 48 դեպք (2020թ.՝32 դեպք),*

• *գազատարների տեխնիկական սպասարկման աշխատանքների հրդեհային անվտանգության հրահանգների բացակայությունը – 59 դեպք (2020թ.՝32 դեպք),*

• *գազատարի տեխնիկական շահագործման՝ շրջայցային կամ տեխնիկական սպասարկման չկատարելը - 69 դեպք (2020թ.՝32 դեպք),*

• *գազատարի տեխնիկական շահագործման՝պրոֆիլակտիկ պլանային վերանորոգման չկատարելը - 71 դեպք (2020թ.՝32 դեպք):*

Վերստուգվել է (ըստ գործունեության բնագավառի) 28 էներգատեղակայանք, որի արդյունքում կատարված խախտումների քանակը նվազել է 46.4%-ով (2020թ.՝ 2 օբյեկտ, արդյունքում նվազել է 75%-ով)։

<u>Գազի համակարգի՝ գազափոխադրման բարձր ճնշման</u> 1 սուբյեկտում ստուգման ընթացքում բացահայտվել է 2 խախտում, այն խախտումների ընդհանուր թվի՝ 1579 0.1% է կազմում (2020թ.՝ 2 սուբյեկտ 5 խախտումով, որը ընդհանուր 974 խախտումների՝ 0.5% է)։

Ըստ գործունեության բնագավառի վերստուգված 1 սուբյեկտում վերացվել են բոլոր 5 խախտումները։

<u>110 կվ և բարձր լարման էլեկտրատեղակայանքներում՝ էլեկտրահաղորդման օդային գծերի</u> 4 տեխնիկական ստուգումների ընթացքում բացահայտվել է 65 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր 1579 խախտումների 4.1%-ը (2020թ.՝ 3 ստուգում 26 խախտումով, որը ընդհանուր 974 խախտումների՝ 2.7% է)։

Ըստ գործունեության բնագավառի վերստուգված 1 սուբյեկտում 6 խախտումից վերացվել է 5-ը։

<u>110կվ և բարձր լարման էլեկտրատեղակայանքի՝ ենթակայանի և բաշխիչ սարքվածքի</u> (2020թ.՝ 8 էլեկտրատեղակայանք) 13 տեխնիկական ստուգումների արդյունքում բացահայտվել է 129 խախտում (2020թ.՝ 74 խախտում, որը ընդհանուր քանակի՝ 974-ի 7.6%-ն է), ինչը կազմում է բացահայտված բոլոր 1579 խախտումների 8.2%-ը։

2021թ. ընթացքում հիմնական խախտումները հետևյալն են.

• *ԲՍ տարածքի բնահողի հաղորդականության մասին տվյալների բացակայությունը - 9 դեպք,*

• *հողակցող սարքվածքների տեղակայումից, վերակառուցումից և հիմնական նորոգումից հետո, ոչ պակաս, քան 6 տարին մեկ, չեն կատարվում հպման լարումների չափումներ - 6 դեպք,*

• *կարգագրով աշխատելիս չի ձևակերպվում նպատակային հրահանգավորումը, առաջնային թույլտվության նպատակային հրահանգավորման գրանցման մատյանում - 6 դեպք:*

2020թ. ընթացքում թույլ տրված հիմնական խախտումները.

- *բաշխիչ սարքվածքի - տարածքի բնահողի հաղորդականության մասին տվյալների բացակայությունը – 6 դեպք,*
- *բաշխիչ սարքվածքի և ՅԼՍ-ի բոլոր մետաղական մասերի հակաքայքայիչ ծածկույթի բացակայությունը – 4 դեպք,*
- *ԵԿ-ի հիմնական և օժանդակ սարքավորումների նորոգման հեռանկարային տարեկան և ամսական ժամանակացույցների բացակայությունը – 4 դեպք:*

2020-2021 թվականներին ըստ գործունեության բնագավառի իրականացված ստուգումների ժամանակ բացահայտված խախտումների գրաֆիկական պատկերները բերված են ստորև.





2020-2021 թվականներին իրականացված վերստուգումներից առաջ և հետո խախտումների քանակի համեմատական գրաֆիկական պատկերներն՝ ըստ գործունեության բնագավառի, բերված են նկարներում.





2021 թվականին 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 6,19 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 2.22-ը: 1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 2,4 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 3,23-ը: Տեսչական մարմնի կողմից իրականացված բոլոր ստուգումները նախատեսված էին տարեկան ծրագրով:

2020 թվականին 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3.7 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 2.01-ը: 1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1.2 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2.0-ը: Տեսչական մարմնի կողմից իրականացված բոլոր ստուգումները նախատեսված էին տարեկան ծրագրով:

2019 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից էներգետիկայի և էներգասպառման բնագավառում ստուգումներ չեն իրականացվել:

Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում

Տեսչական մարմնի 2021 թվականի ընթացքում գործունեության տարեկան ծրագրով հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում նախատեսված էր կատարել ստուգումներ 399 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող 452 ընդհանուր նշանակության բազաներում և պահեստներում, արտադրական նշանակության օբյեկտներում, բենզալցակայաններում, գազալցավորման կայաններում, առևտրի և հասարակական սննդի, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող օբյեկտներում, պայթուցիկ նյութերի, նավթամթերքի, հեղուկ և բնական գազերի պահեստներում, հյուրանոցում, կառավարման հիմնարկներում, գիտական և ուսումնական հաստատություններում և այլ օբյեկտներում: Նախատեսված ստուգումներից ավարտվել են 337-ը (319 սուբյեկտ, նախատեսված ընդհանուր քանակի 74.6%), ևս 8 ստուգում իրականացվել է հանրությունից ստացված դիմում-բողոքի և 51 ստուգում՝ պետական մարմնի կողմից ստացված գրությունների հիման վրա: Ստուգումների գործունեության տարեկան ծրագրով նախատեսված 115 օբյեկտ չի ստուգվել չգործելու, ժամանակավոր չգործելու և սնանկության պատճառով: 3 օբյեկտի ստուգման արդյունքների ամփոփումը ընթացքի մեջ է:

2021 թվականի ընթացքում հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում ընդհանուր թվով 366 տնտեսվարող սուբյեկտների 396 օբյեկտներում (ընդ որում՝ 25-ը էներգետիկայի և էներգասպառման բնագավառի հետ համատեղ) իրականացվել են ստուգումներ: Իրականացվել է 249 վերստուգում:

2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 784 ստուգումներից ավարտվել էր 355-ը (նախատեսված ընդհանուր քանակի 45.2%): Եվս 56 օբյեկտներում կատարվել են ոչ պլանային ստուգումներ, այդ թվում՝ 51 օբյեկտներում՝ Վարչապետի հանձնարարականով, 2 օբյեկտում՝ հանրությունից ստացված դիմում-բողոքների հիման վրա և 3 օբյեկտներում՝ պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա: Իրականացվել է 411 ստուգում և 99 վերստուգում:

2019 թվականի ընթացքում ՀՀ վարչապետի հանձնարարականով իրականացվել էր 135 ստուգում:

2019, 2020 և 2021 թվականների ընթացքում կատարված ստուգումների և վերստուգումների համեմատությունն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



2019, 2020 և 2021 թվականների ընթացքում կատարված վերստուգումների արդյունքում խախտումները նվազել են 15%-ով:



Ըստ մարզերի 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածում կատարած ստուգումները/վերստուգումներն ըստ տարածքային միավորների բաշխված են հետևյալ կերպ.



Ստուգումների արդյունքում արձանագրվել է 2163 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Ստուգումներն իրականացվել են գործունեության հետևյալ ոլորտներում՝



Նշված ժամանակահատվածում ստուգվել է ընդհանուր նշանակության պահեստների և բազաների տնտեսավարող սուբյեկտների 54 օբյեկտ, որոնցից 16-ը՝ պետական մարմնի կողմից ստացված գրությունների հիման վրա: Բացահայտվել է 542 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 25.1%-ը (ընդհանուր խախտումների քանակը 2163 է) :

Հիմնական խախտումներն են.

- հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 36 դեպք,

- կախված մակերեսի չափերից պահեստները սարքավորված չեն հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգով – 33 դեպք,
- Էլեկտրամատակարարումն անջատող սարքերը (անջատիչները) չեն գտնվում պահեստից դուրս – 32 դեպք,
- պահեստային շինությունում օգտագործվում են խրոցակային վարդակներ - 30 դեպք,
- 500 խ.մ -ից ավելի ծավալով պահեստային շենքերը սարքավորված չեն հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 լ/վրկ ջրի շիթով – 30 դեպք:

200 ք.մ և ավելի մակերեսով առևտրի և հասարակական սննդի 115 օբյեկտներում բացահայտվել է 511 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 23.6%-ը: Օբյեկտներից 13-ը իրականացվել է պետական մարմինների կողմից ստացված գրությունների և 1-ը՝ դիմում-բողոքի հիման վրա:

Հիմնական խախտումներն են.

- հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 61 դեպք,
- առևտրի և հասարակական սննդի օբյեկտները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 48 դեպք,
- հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվում սարքին վիճակում – 36 դեպք,
- արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200մ շառավղով) նախատեսված չէ առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 50 խ.մ տարողությամբ հակահրդեհային ջրավազան – 30 դեպք,
- «Ա», «Բ», «Վ» կարգի շինություններում կրակմարիչները տեղադրված չեն հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի հեռավորության վրա – 28 դեպք:

Նշված ժամանակահատվածում ստուգվել է մինչև 200 ք.մ մակերեսով առևտրի և հասարակական սննդի 24 օբյեկտ, որոնցից 4-ը՝ դիմում-բողոքով և 1-ը՝ պետական մարմնի կողմից ստացված գրության հիման վրա: Ստուգումների արդյունքում բացահայտվել է 46 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 2.1%-ը:

Հիմնական խախտումներն են.

- առևտրի և հասարակական սննդի օբյեկտները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 7 դեպք,
- հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին - 7 դեպք,
- օբյեկտն ապահովված չէ հրդեհաշիջման սկզբնական միջոցներով - 6 դեպք:

200 ք.մ և ավելի մակերեսով արտադրական կազմակերպությունների 111 օբյեկտներում բացահայտվել է 446 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 20.6%-ը: 10 օբյեկտ ստուգվել է պետական մարմինների կողմից ստացված գրությունների հիման վրա:

Հիմնական խախտումներն են.

- կախված մակերեսի չափերից արտադրական շենքերն ու շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 62 դեպք,
- 500 խ.մ-ից ավելի ծավալով արտադրական շենքերն ու շինություններն սարքավորված չեն հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 լ/վրկ ջրի շիթով – 49 դեպք,
- հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 49 դեպք,
- հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվում սարքին վիճակում – 48 դեպք,
- ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված չեն փողակով և փողրակով – 37 դեպք:

Մինչև 200 ք.մ մակերեսով արտադրական կազմակերպությունների 7 օբյեկտներում բացահայտվել է 17 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0.8%-ը:

Բենզալցակայանների 38 օբյեկտներում բացահայտվել է 89 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 4.1%-ը: 16 օբյեկտ ստուգվել է պետական մարմինների կողմից ստացված գրությունների հիման վրա և 1-ը՝ դիմում-բողոքով:

Հիմնական խախտումներն են.

- բենզալցակայանը սարքավորված չէ հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 17 դեպք,
- բենզալցակայանի տարածքն ապահովված չէ շանթարգելման համակարգով – 16 դեպք,
- հեղուկ վառելիքի ստորգետնյա տարողություններով բենզալցակայանից մինչև այլ շենքերի և շինությունների միջև պահանջվող միջտարածությունները պահպանված չեն – 13 դեպք,
- արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 խ.մ տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով – 11 դեպք:

Բնակելի շենքերի, հյուրանոցների և հանրակացարանների 3 օբյեկտում բացահայտվել է 23 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 1.1%-ը:

Նշված ժամանակահատվածում ստուգվել է գազալցավորման կայանների 71 օբյեկտ, որոնցից 3-ը՝ պետական մարմինների կողմից ստացված գրությունների հիման վրա և 1-ը՝ դիմում-բողոքով:

Ստուգումների արդյունքում բացահայտվել է 431 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 19.9%-ը։

Հիմնական խախտումներն են.

- արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 խ.մ տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով – 38 դեպք,
- ԱԳԼՃԿ-ի տարածքում իրեն պատկանող շինությունների միջև նորմերով պահանջվող նվազագույն միջտարածությունները պահպանված չեն - 31 դեպք,
- գազալցակայանի տարածքում տեղակայված շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 28 դեպք,
- օդափոխության համակարգերում կիրառված չեն պայթյունաանվտանգ կատարմամբ օդափոխիչներ և էլեկտրաշարժիչներ – 23 դեպք,
- արտածման համակարգերից օդի արտանետումը չի կատարվում շենքից վեր՝ ոչ պակաս քան 2 մետր բարձրության վրա – 23 դեպք,
- չտաքացվող սենքերում բնական օդափոխությունը չի իրականացվում արտաքին պատերի ներքևի մասերում տեղակայված շերտափեղկային ցանցերի միջոցով – 23 դեպք։

Գիտական և ուսումնական հաստատությունների 3 օբյեկտներում բացահայտվել է 3 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0.1%-ը։ Ստուգումներից 2-ը պետական մարմինների կողմից ստացված գրությունների հիման վրա է անցկացվել, իսկ մեկը՝ դիմում-բողոքի։

Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող 3 օբյեկտներում բացահայտվել է 2 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0.1%-ը։

Հիվանդանոցների, պոլիկլինիկաների և ամբուլատորիաների մեկ օբյեկտի ստուգման արդյունքում տրամադրվել է թերությունների բացակայության վերաբերյալ տեղեկանք։

Նշված ժամանակահատվածում ստուգվել է կառավարման հիմնարկների 15 օբյեկտ, որոնցից 1-ը՝ պետական մարմնի կողմից ստացված գրության հիման վրա։ Բացահայտվել է 49 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 2.3%-ը։

Հիմնական խախտումներն են.

- հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 7 դեպք,
- տանիքի պարագծով տեղակայված մետաղական ճաղաշարը չի գտնվում սարքին վիճակում – 6 դեպք,

- ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված չեն փողակներով և փողրակներով – 5 դեպք,
- կախված մակերեսի չափերից կառավարման հիմնարկները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 5 դեպք:

Նավթամթերքների պահեստների 3 օբյեկտի, որոնցից 2-ը իրականացվել է պետական մարմինների կողմից ստացված գրությունների հիման վրա, ստուգման արդյունքում թերություններ չեն հայտնաբերվել:

Ստուգվել է պայթուցիկ նյութերի պահեստների 2 օբյեկտ, բացահայտվել է 4 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0.2%-ը: Մեկ օբյեկտը ստուգվել է պետական մարմնի կողմից ստացված գրության հիման վրա, որի արդյունքում թերություններ չեն հայտնաբերվել:

Սոցիալական ապահովության կազմակերպությունների ծերանոցների, հաշմանդամների տների, մանկատների մեկ օբյեկտի ստուգման արդյունքում խախտում չի բացահայտվել, տրամադրվել է տեղեկանք թերությունների բացակայության վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 302 կարգադրագիր, 94 տեղեկանք՝ թերությունների բացակայության վերաբերյալ:



Ստուգումների արդյունքում կազմվել է թերությունների բացակայության վերաբերյալ 94 տեղեկանք («ՎԵԴԻ ԳԱԶ» ՍՊԸ, «ԴԵՅՎ» ՍՊԸ, «ՍՊԻՏԱԿ ՏՆԱԿ» ՍՊԸ, «ՍԻԼ-ՄԱԱԶԱ» ՍՊԸ, «ԳԵԴԵՈՆ ՌԻԽՏԵՐ ԴԵՂԱՏՈՒՆ ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ, «ԿԱՐԵՆ

ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ, «ՎԻՎԱՌՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ՆԻԿԱ-ԿԱՏՐԻՆ-ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ, «ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ, «ԲԱՐՍԻՍ» ՍՊԸ, «ՖԱՍՏՖՈՒԴ» ՓԲԸ, «ԿԱՐԻՆԱ ԵՎ ՍՈՍ» ՍՊԸ, «ԱԳՈՒԼԻՍ» ՍՊԸ, «ԿՈՏԱՅՔ-91» Ա/Կ, «ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ, «ԻՎԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ, «ՋՈՅ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ, «ԱՌԵՎՏՐԻ ՏՈՒՆ ՎԻԿՏՈՐԻԱ» ՍՊԸ, «ԳԼՈԲԱԼ ՄՈԹՈՐՍ» ՓԲԸ, «ՍԻԳՆԱԼ» ԲԲԸ, «ԿՈՄՖՈՐՏ Ռ ԵՎ Վ» ՍՊԸ, «ԹԱՄԱՐ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՎԱՆԻԿԻ» Ա/Ձ, «ԺԵՆԻԿ ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ» Ա/Ձ, «ԿԱՄՈ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԳՐԻՇԱՅԻ» Ա/Ձ, «ՌՈԲԵՐՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ» Ա/Ձ, «ԴԻԿՍԻ» ՍՊԸ, «ՎԱՆԱՏՈՒՆ» ՍՊԸ, «ՍԱՐԳՍՅԱՆ ՖԵԼԻՔՍ ԼԵՎԻԿԻ» Ա/Ձ, «ՎԱՐԳԱ-ՖՈՒԴ» ՍՊԸ, «ՄԱՍՏԵՐ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ՄՀԵՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՍՊԸ, «ՇԻՐԱՌ» ՍՊԸ, «ԼԻԼԻԴԵՆՏԻՍ» ՍՊԸ, «ԱԼԵՔՍԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄԻ» Ա/Ձ, «ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՐՀԱՆՔ» ԲԲԸ, «ՍԱՄՎԵԼ ԱՐԱՄՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ» Ա/Ձ, «ԳԵՎՈՐԳ ԵԴԻԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱՅԻ» Ա/Ձ, «ԱՊԱՐԱՆ ՍԻԹԻ» ՍՊԸ, «ԲԱՋՄԱԲԵՐԴ» ՍՊԸ, «ԱՊԱՐԱՆ ՖՈՒԴ» ՍՊԸ, «ԱՇՏԱՐԱԿԻ ՊՈԼԻԳՐԱՖԻԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ, «ՍԱՖԱՐԴԱՅ» ՍՊԸ, «ՄԱՐՏԻԿՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ, «ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ» Ա/Ձ, «ՎՐՈՒՅՐ ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍԻ» Ա/Ձ, «ԼԵՆԱ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ» Ա/Ձ, «ԱՆՈՒՇ ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆ ԿԱՄՈՅԻ» Ա/Ձ, «ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՋԵՎԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ» ԱՍ, «ԳԱՎԲԱՋ» ՍՊԸ, «ՏԻԳՀԱՐ» ՍՊԸ, «ԳԱԳԱ-ԷՏ» ՍՊԸ, «Հ.Վ.Գ» ՍՊԸ, «ՄՐԳԱՆՈՒՇ ԳԻՆՈՒ-ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, «ՏԱՎԻՆԿՈ ԳԻՆՈՒ-ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, «ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ /Արարատի մարզ, գ. Ավշար, Խորենացու փող. 94/, «ՇԱՏՈ-ԱՌՆՈ» ՍՊԸ, «ՍՊԱՅԿԱ» ՍՊԸ, «ՎԻԳՀԱՍ» ՍՊԸ, «ԱՐԱՐԱՏՅԵՄԵՆՏ» ՓԲԸ, «ՔԱՐԵՐԻ ԱՐՔԱ» ՍՊԸ, «ԴԻԱՏՈՄԻՏ ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ» ՓԲԸ, «ՄՈՐԵՆԱ» ՍՊԸ, «ԱՄՐՈՑԱՔԱՐ» ՍՊԸ, «ՍՈՒՍԱՆՆԱ ԵՎ ՌԱՖԻԿ» ՍՊԸ, «ՇԱՀՈՒՄՅԱՆ-ԳԱՋ» ՍՊԸ, «ՄԱԿԱԳՈՆ» ՍՊԸ, «ՎԻԿՏՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ» Ա/Ձ, «ԱՐՄԵՆԱՍԱ» ՍՊԸ, «ՎԱՐՈՒԺԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԴԱՎԹԻ» Ա/Ձ, «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ /Արարատի մարզ, ք.Մասիս 1-ին փ. թիվ 61/, «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ /Արարատի մարզ, ք.Արտաշատ Օգոստոսի 23փ. 79/7/, «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ /Արարատի մարզ, ք.Արարատ Շահումյան 32/, «ԷՍԷՌՎԻ ՇԻՆ» ՍՊԸ, «ՄԱՏԻԼԴԱ» ՍՊԸ, «ՀՀ ԳԱԱ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ, «ԹԱԼԻՆԻ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ» ՓԲԸ, «ՁՈՐԱՀՈՒՅՍ» ՍՊԸ, «ՉԱԱՐԱՏ ԿԱՊԱՆ» ՓԲԸ, «ՍԻՆԵՐՋԻ ՅՈՒՐՈՓ» ՍՊԸ, «ՄԵՏԱՂ ԿԱՅՄ ՀԻԴՐՈ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ, «ՆՈՐԱՅՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ» Ա/Ձ, «ԲԱՆՋԱՐԱԲՈՍՏԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ, «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ /Կոտայք, գ. Կաթնաղբյուր, սանիտարական գոտի/, «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ /Կոտայք, գ. Արզական, սանիտարական գոտի/, «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ /Կոտայք, գ. Գառնի, սանիտարական գոտի/, «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ /Կոտայք, Արզնի – Գետամեջ սանիտարական գոտի/, «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ /Լոռու մարզ, Վանաձոր համայնք, Ն. Ստեփանյան փող. շենք 2Ա/, «ՍՈՒՐԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ» Ա/Ձ, «ՍԱՐԳԻՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» Ա/Ձ, «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐՑԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ, «ԼԱՏՏԵ» ՍՊԸ, «ԳՈԼԴ ՊԵՏՐՈԼ» ՍՊԸ, «ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ):

Իրականացվել է 249 վերստուգում, որոնց արդյունքում խախտումների քանակը նվազել է 58.73%-ով:



Վերստուգումների արդյունքում կազմվել է 111 տեղեկանք՝ թերությունների բացակայության վերաբերյալ («ԱՐՄՏԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ՖԼԵՇ» ՍՊԸ, «ԳՅՈՒՄՐՈՒ Վ.ԱՃԵՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊՈԱԿ, «ՍԱՐԱՆԻՍ» ՍՊԸ, «ՆԻԿՈԼԱՅ ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ, «ԱՇՏԱՐԱԿ ՁՈՒ» ՍՊԸ, «ՓԻ ԸՆԴ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ՊՐԻՆՏԱՐՄ ԴԱՆՎԵՍՏ» ՍՊԸ, «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍԳԱԶ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆԻ ԳԱԶԻ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ» ԱՍ, «ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆՆԵՐ ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ» ՍՊԸ, «ԹՌՉՆԱՖԱԲՐԻԿԱ ԳԵՏԱՄԵՋ 2016» ՍՊԸ, «ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ» Ա/Ձ, «ՀԱՄԵՐԱՇԽ ԸՆՏԱՆԻՔ» ՍՊԸ, «ՆՈՐ ՖՈՒԴ» ՍՊԸ, «ԵՂՎԱՐԴԻ ՄԱՐԶԱԿՈՇԻԿՆԵՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ԲԲԸ, «ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ, «ՆՈՒՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ ՂԱՐԻԲԻ» Ա/Ձ, «ՌԱԳԱՌՈՒ» ՍՊԸ, «ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱՐԱՏ ԿՈՆՅԱԿԻ-ԳԻՆՈՒ-ՕՂՈՒ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ, «ՎԻՎԻԿԱ» ՍՊԸ, «ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԶԻԶՅԱՆ ԷԴԻԿԻ» Ա/Ձ, «ԱՐՄԵՆ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ, «ԱՐՄԵՆ ՄԱՒԼՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ» Ա/Ձ, «ԴՂՅԱԿ» ՍՊԸ, «ՄԱՐԻԼԱ» ՍՊԸ, «ԴԱՆԵՍԻԱ» ՍՊԸ, «ԱԹՈ ՑԼԻԿ ԱՄՐԱՄ» ՍՊԸ, «ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ, «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀՄԴ, «ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՐԱՄԲԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ, «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ, «ՍԵՎԱԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ» ՍՊԸ, «ՍԵԼ» ՍՊԸ, «ԷԴԵՄ-ՀԱՍ» ՍՊԸ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ» ԱՍ, «ՔՈՒԱԼԻՏԵԿ ՄԱՇԻՆԸՐԻ» ՍՊԸ, «ՇԱՀԱՐՏ» ՍՊԸ, «ԱՐԱՐԱՏԻ ՀԻՎԱՆԴՈՑ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ, «ԱՐՏԱՇԱՏ ՊԼԱԶԱ» ՍՊԸ, «ԱՓՆԱԳՅՈՒՂ» ՍՊԸ, «ՀԱՏԻՍԻ ԼԱՆՋԻՆ» ՍՊԸ, «ՍԹԻԼ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ, «ՕՆԻՐԱ ՔԼԱԲ» ՍՊԸ, «ԲԱՂՐԱՄՅԱՆ» ՍՊԸ, «ԳԿ ՊԵՏՌՈԼ» ՍՊԸ,

«ԼԱԼԱՅԱՆ ԲԵԳԼԱՐ» Ա/Ձ, «ՈՍՄԱՐ» ՍՊԸ, «ՊՌՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, «ԷՋՄԻԱԾՆԻ ԲԵՌՆԱՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ» ԲԲԸ, «ՄԵՂՐԱՁՈՐ ԳՈԼԴ» ՍՊԸ, «ԳԵՏԱՓ» ՍՊԸ, «ԳՅՈՒՄՐԻ-ՀԱՑ» ՍՊԸ, «ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳԵՂԵՑԿՈՒՀԻ» ՍՊԸ, «ԻԳՈՍ» ՍՊԸ, «ՍԻՍԻԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՈՒՆԴ» ՍՊԸ, «ԳՈՌ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԱՄՎԵԼԻ» Ա/Ձ, «ՉԻՆԱՐԻ» Ա/Կ, «ԱՆՆԱ -ԴԻԱՆԱ» ՍՊԸ, «ՍՈՒՐԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ ԿԱՐԵՆԻ» Ա/Ձ, «ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ, «ԹԱՄԱՐԱ ՖՈՒԴ» ՍՊԸ, «ԵՎՐՈԹԵՐՄ» ՓԲԸ, «ԱՎՇԱՐ ՊՐՈԴ» ՍՊԸ, «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ /Շիրակի մարզ ք.Գյումրի, Թումանյան թիվ 131/, «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ /Լոռու մարզ, ք.Վանաձոր, Հյուսիսային փողոց թիվ 2/, «Մ.ԻԳԻԹՅԱՆ» ՍՊԸ, «ՕԿԵՅ» ՍՊԸ, «ՎԱ-ԱՐՏ» ՍՊԸ, «ՍԳ ԳԱԶ» ՍՊԸ, «ԹՐԵՅԴ ՍԵՆԹՐ ՄԱՅ» ՍՊԸ, «ՀՈԼԱՆԻ» ԲԲԸ, «ՋԻ ԷՅ ԷԼ ՎՈՒԴ» ՍՊԸ, «ԵՂՎԱՐԴԻ ԳԻՆՈՒ-ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ, «ՊՈԼԻ-ՍԵՐՎ» ՍՊԸ, «ԲԱԳԱՎԱՆ» ՓԲԸ, «ՎԱՀԱՆ ԵՎ ԻՆԳԱ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐ» ՍՊԸ, «ԳՈՒԳԱ ՏԵԽՆՈ» ՍՊԸ, «ԳԱՎԱ» ՍՊԸ, «ԹԵՄ-ԱՐՄ-ԿԱՐ» ՍՊԸ, «ՎՈՒԴ ԹԱՈՒՆ-Գ» ՍՊԸ, «ՆԱՐԵԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏԻ» Ա/Ձ, «ԱԿՈՒՌԱՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԱՇՈՏ ԽԼՂԱԹՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ» Ա/Ձ, «ԲԵԿՈՐ» ՓԲԸ, «ԱՊԱՌԱԺ» ՍՊԸ, «ՄՈԴՈՒՍ ԳՐԱՆՈՒՄ» ՍՊԸ, «ՍՈԼԻԱՆ» ՍՊԸ, «ՀԱՏՈՒԿ ՑԵՄԵՆՏ» ՍՊԸ, «ԱՐԱԳՈՆԻՏ» ՍՊԸ, «ԳԱՍՊԱՐ51» ՍՊԸ, «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՎՏՈԳԱԶ» ՍՊԸ, «ՁՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ, «ԱԳՐՈՒՄՊՈՒԼՍ» ՍՊԸ, «ՀԻՆ ՓԱՐՎԱՆԱ» ՍՊԸ, «ՆԵՐՍԻՍՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ, «ՌՈԲ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊԸ, «ՔԱՐԱԲԵՐԴ» ՍՊԸ, «ՅՈՒԼԻԱՆ» ՍՊԸ, «ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ /Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Արարատյան 2/, «ՊԵՏՐՈՍ-ԶԱԽԱՐ» ՍՊԸ, «ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ, «ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎՏՈՈՒՂԻՆԵՐ» ՍՊԸ, «ՍՏԵԿՈ» ՍՊԸ, «Տ.Ա.Մ.-ԳՐԵՅՆ» ՍՊԸ, «ՄՈՆԱԿՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԲԸ, «ՎԱՆ 777» ՍՊԸ, «ԹԵԳԱԱՐ» ՍՊԸ, «ՄԱՊ» ՓԲԸ, «ՆՈՐԱՊԱՏ» Ա/Կ, «ՎԵԴԻ-ԱԼԿՈ» ՓԲԸ):

Վերստուգումներն ըստ գործունեության ոլորտների ունեն հետևյալ գրաֆիկական պատկերը.



2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3,48 օր (2020 թվականին՝ 2,9 օր), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2.11-ը (2020 թվականին՝ 2,4-ը):

Ոչ պլանային ստուգումների 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3,15 օր (2020 թվականին՝ 2,1 օր), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1,80-ը (2020 թվականին՝ 2,1-ը):

2021 թվականի ընթացքում կատարված ստուգումների 61.4%-ը նախատեսված էր 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով, իսկ 38.6%-ը՝ ոչ պլանային է:

1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1,65 օր (2020 թվականին՝ 1,6 օր), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2-ը (2020 թվականին՝ 2-ը):

Քաղաքաշինության բնագավառում

Քաղաքաշինության բնագավառում 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված 757 ստուգումներից իրականացվել է 439-ը, ինչը կազմում է նախատեսված ընդհանուր քանակի 58%-ը (2020 թվականի ընթացքում 385-ից իրականացվել է 64 ստուգում՝ 17%, իսկ 2019-ին ստուգում չի իրականացվել ստուգաթերթերի բացակայության պատճառով): 318 օբյեկտ չի ստուգվել՝ ավարտական ակտի և այն ստանալու համար դիմում ներկայացնելու պատճառով (147 օբյեկտ), շինարարական աշխատանքների բացակայության կամ սուբյեկտին ծանուցելու անհնարինության (96 օբյեկտ), սեփականաշնորհման վկայականի (25 օբյեկտ,) դրական եզրակացության (4 օբյեկտ) առկայության, շինթույլտվության կասեցման կամ ուժը կորցրած ճանաչելու (3 օբյեկտ), ավարտված շինարարության (8 օբյեկտ), իրականացված ոչ պլանային ստուգում (2 օբյեկտ), խոչընդոտ (2 օբյեկտ), 2020 թվականի 4-րդ եռամսյակում ստուգված լինելու (1 օբյեկտ), ՀՀ սահմանամերձ տարածքում ստեղծված իրավիճակի (1 օբյեկտ) պատճառով: Կրկնակի տրամադրված շինարարական թույլտվությունների պատճառով Ստուգումների տարեկան ծրագրում 30 հասցե կրկնվում է:

Միաժամանակ իրականացվել է 65 ոչ պլանային ստուգում՝ 16-ը Երևանում, 9-ը Արագածոտնի մարզում, 4-ական Գեղարքունիքի, Տավուշի և Կոտայքի մարզերում, 12-ը Լոռու մարզում, 5-ական Շիրակի և Սյունիքի մարզերում, 3-ը Արարատի մարզում, 2-ը Վայոց ձորի մարզում, 1-ը Արմավիրի մարզում: Ընդհանուր առմամբ, իրականացվել է 504 ստուգում, որից 176-ը (34,92%) Երևանում, 71-ը (14.08%)՝ Կոտայքի, 38-ը (7.54%)՝ Սյունիքի, 35-ական (6.94%)՝ Արագածոտնի, Լոռու, Արարատի և Շիրակի, 32-ը (6.35%)՝ Արմավիրի, 21-ը (4.16%)՝ Տավուշի, 19-ը (3.76%)՝ Գեղարքունիքի և 7-ը (1.39%)՝ Վայոց Ձորի մարզերում:



Ստուգումների արդյունքում արձանագրվել է 1645 խախտում (2020 թվականի ընթացքում արձանագրվել էր 438 խախտում), որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.





Հիմնական խախտումները վերաբերում են.

➢ **շինարարություն իրականացնող** տնտեսավարող սուբյեկտների (կապալառու) մոտ հայտնաբերվել է 619 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 37,63%-ը: Առավել կրկնվող խախտումներն են.

- շինարարությունը չի իրականացվում համաձայնեցված նախագծին համապատասխան՝ 154 դեպք,
- բետոնի փորձարկման ակտի բացակայություն՝ 75 դեպք,
- շինարարության վարման մատյանում բացակայում են կապալառուի կողմից կատարված համապատասխան նշումներ՝ 78 դեպք.

➢ **շինարարության որակի** տեխնիկական հսկողություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 402 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 24,43%-ը: Առավել կրկնվող խախտումները վերաբերում են

- շինարարության վարման մատյանում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնողի համապատասխան նշումների բացակայությանը՝ 130 դեպք,
- շինարարության որակի տեխնիկական հսկողի կողմից ծածկված աշխատանքների ակտերը չստորագրելուն՝ 77 դեպք,
- տեխնիկական հսկողություն իրականացնողի կողմից շինարարության վարման մատյանը չլրացնելուն՝ 79 դեպք։

➢ շինարարության նկատմամբ **հեղինակային հսկողություն** իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 203 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 12,34%-ը։ Առավել կրկնվող խախտումներն են.

- շինարարության վարման մատյանում բացակայում են հեղինակային հսկողություն իրականացնողի համապատասխան նշումները՝ 95 դեպք,
- հեղինակային հսկողություն իրականացնողի կողմից չի լրացվել շինարարության վարման մատյանը՝ 58 դեպք,
- բացակայում են հեղինակային հսկողի կողմից լրացված և ստորագրված ծածկված աշխատանքների ակտերը՝ 50 դեպք,

➢ **կառուցապատողների** մոտ հայտնաբերվել է 193 խախտում՝ ընդհանուր խախտումների 11,73%-ը, որից ավելի հաճախ՝ 39-ում՝ տեղեկանքում նշված չէ շինարարության տեխնիկական հսկողությունն իրականացնող կազմակերպության անվանումը և լիցենզիայի համարը, իսկ 39-ում կառուցապատողը չի ապահովել շինարարության տեխնիկական հսկողության իրականացումը համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության միջոցով,

➢ համայնքի ղեկավարի կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 215 խախտում, որը կազմում է ընդհանուր խախտումների 13,07%-ը,

➢ **ճարտարապետաշինարարական նախագիծ մշակող** կազմակերպության գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 6 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 0,36%-ը,

➢ **փորձաքննություն իրականացնող** տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 7 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 0,43%-ը։

Խախտումների բացակայության վերաբերյալ տրվել է 244 տեղեկանք (2020 թվականի ընթացքում՝ 20), կազմվել և տրամադրվել է 195 պարտադիր կատարման ցուցում (2020 թվականի ընթացքում՝ 44):





Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների 87,1 տոկոսը նախատեսված էր Տարեկան ծրագրով, իսկ 12,9 տոկոսը պլանավորված չէր:

Տարեկան ծրագրով 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 6.98 օր, իսկ ոչ պլանային ստուգմանը՝ 1.6 օր, և չի պահանջվել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Տարեկան ծրագրով յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 2.01-ը, իսկ ոչ պլանային ստուգման համար՝ 1.94-ը (2020 թվականին 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 5.52 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1.92-ը: Տեսչական մարմնի կողմից իրականացված բոլոր ստուգումները նախատեսված էին տարեկան ծրագրով):

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

Հողօգտագործման բնագավառում 2021 թվականի տարեկան ծրագրով նախատեսված էր իրականացնել 10 ստուգում, որոնք իրականացվել են ամբողջ ծավալով: Ստուգումների արդյունքում բացահայտվել է 637 խախտում, որից 84-ը ընդհանուր քանակի 13,18%՝ Արարատի, 54-ը ընդհանուր քանակի 8,47%՝ Արմավիրի, 89-ը ընդհանուր քանակի 14%՝ Արագածոտնի, 58-

ը ընդհանուր քանակի 9,1%՝ Կոտայքի, 67-ը ընդհանուր քանակի 10,51%՝ Վայոց Ձորի, 77-ը ընդհանուր քանակի 12,08%՝ Սյունիքի, 26-ը ընդհանուր քանակի 4,08%՝ Շիրակի, 60-ը ընդհանուր քանակի 9,42%՝ Լոռու, 75-ը ընդհանուր քանակի 11,77%՝ Գեղարքունիքի և 47-ը ընդհանուր քանակի 7,39%՝ Տավուշի մարզերում:



Պլանային ստուգումների արդյունքում կայացվել է 28 որոշում՝ վարչական տույժ նշանակելու մասին: Որոշումների հիման վրա նշանակված գումարը կազմում է 7850000 ՀՀ դրամ: Միաժամանակ արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու նպատակով համապատասխան իրավասու մարմիններ ներկայացվել է 20 հաղորդում:

Տարեկան ծրագրով նախատեսված ստուգումներից բացի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է նաև 17 ըստ անհրաժեշտության ստուգում, որոնցից 4-ը ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, 13-ը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ինչպես նաև հանրությունից ստացված բողոքների հիման վրա: Արդյունքում կայացվել է 10 որոշում՝ վարչական տույժ նշանակելու մասին: Որոշումների հիման վրա նշանակված գումարը կազմում է 2350000 ՀՀ դրամ: Միաժամանակ արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու նպատակով համապատասխան իրավասու մարմիններ ներկայացվել է 16 հաղորդում:

2021 թվականի ընթացքում իրականացված պլանային և ոչ պլանային ստուգումների արդյունքում արձանագրվել է 851 խախտում, որոնք ըստ համայնքների ունեն հետևյալ բաշխվածությունը.



Ստուգումների արդյունքում հիմնականում արձանագրվել են նպատակային նշանակության, գործառնական նշանակության և օտարման կարգի խախտումներ: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է նաև, որ որոշ համայնքներում հողերի ընթացիկ հաշվառման աշխատանքներն իրականացվում են թերություններով, մասնավորապես չի վարվում հերթապահ կադաստրային քարտեզ: Սխալ են կազմված համայնքների հողային հաշվեկշիռները, որոնք հետագայում դառնում են մարզի, այնուհետև՝ հանրապետության հողային հաշվեկշռի մի մասը:

Հողօգտագործման բնագավառում տարեկան ծրագրով նախատեսված էր 2020 թվականի ընթացքում իրականացնել 10 ստուգում, սակայն ՀՀ-ում ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ կատարվել են միայն երկուսը, ինչը կազմում է նախատեսվածի 20 տոկոսը: ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերում իրականացված ստուգումների արդյունքում բացահայտվել է համապատասխանաբար՝ 66 և 80 խախտում: Կայացվել է 5 որոշում՝ վարչական տույժ նշանակելու մասին: Որոշումների հիման վրա նշանակված գումարը կազմում է 1800000 ՀՀ դրամ: Միաժամանակ արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու նպատակով համապատասխան իրավասու մարմիններ ներկայացվել է 4 հաղորդում:

Նախորդ տարվա ընթացքում իրականացվել է 14 ոչ պլանային ստուգում, որոնցից 1-ը ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, 13-ը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ինչպես նաև հանրությունից ստացված բողոքների հիման վրա: Բացահայտվել է 71 խախտում: Արդյունքում կայացվել է 7 որոշում՝ վարչական տույժ նշանակելու մասին: Որոշումների հիման վրա նշանակված գումարը կազմում է 1200000 ՀՀ դրամ: Միաժամանակ արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու նպատակով համապատասխան իրավասու մարմիններ ներկայացվել է 9 հաղորդում:

2020 և 2021 թվականների ընթացքում իրականացված պլանային և ըստ անհրաժեշտության ստուգումներն ունեն հետևյալ գրաֆիկական բաշխվածությունը.



Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է 27 ստուգում, որից 10-ը ստուգումների ընդհանուր քանակի 27 նախատեսված է եղել Ստուգումների տարեկան ծրագրով, իսկ 17-ը ստուգումների ընդհանուր քանակի 63 պլանավորված չի եղել: Տարեկան ծրագրով 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 9,3 օր, իսկ ոչ պլանային ստուգմանը՝ 3,6 օր: Տարեկան ծրագրով յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 2.8-ը, իսկ ոչ պլանային ստուգման համար՝ 2-ը:

2020 թվականի ընթացքում իրականացվել է 16 ստուգում, որից 2-ը նախատեսված է եղել Ստուգումների տարեկան ծրագրով, իսկ 14-ը պլանավորված չեն եղել: Տարեկան ծրագրով 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 10 օր, իսկ ոչ պլանային ստուգմանը՝ 1,8 օր: Տարեկան ծրագրով յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 3-ը, իսկ ոչ պլանային ստուգման համար՝ 2,5-ը:

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

2021 թվականի ընթացքում տրանսպորտի անվտանգության մասնագետների կողմից ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի տարածքներում գործող «Հայավտոկայարան» ՓԲԸ ավտոկայարաններում, ավտոկայաններում, երթակարգավարական կետերում, ինչպես նաև այդ տարածքներից դուրս կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղիների սկզբնակետ/ վերջնակետերում պարբերաբար իրականացվել է միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների սպասարկման կազմակերպման գործընթացի, տրասպորտային միջոցների շահագործման և տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության նկատմամբ 5269 վերահսկողական միջոցառում, ինչը 2,1 անգամ պակաս է, քան 2020թ-ին 11206 վերահսկողական միջոցառում և 4,1 անգամ ավելին է, քան 2019 թվականի ընթացքում կատարված աշխատանքը (1261 մշտադիտարկում):





Կանոնավոր, ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ իրականացվել է 3796 վերահսկողական միջոցառում (ընդհանուր քանակի 72%), որոնց 7,5%-ը Կոտայքի մարզում, 13,2%-ը Շիրակի մարզում, 33,4%-ը Երևանում և այլն՝ համաձայն պատկերի.



Կանոնավոր, ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ 2021 թվականի ընթացքում իրականացված 3796 մշտադիտարկումը 3,9 անգամ ավելին է, քան 2019 թվականի ընթացքում կատարված աշխատանքի ծավալը և 1,8 անգամ պակաս, քան 2020 թվականին իրականացվածը:



2021 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական միջոցառումների ընդհանուր քանակի 18,4%-ը կազմում է թեթև մարդատար ավտոմոբիլներով իրականացվող ուղևորափոխադրումների նկատմամբ կատարված վերահսկողական բնույթի աշխատանքը:

Հ/Հ	Մարզեր	Թեթև-մարդատար ավտոմոբիլներով իրականացվող ուղևորափոխադրումների նկատմամբ վերահսկողությունների քանակը	
		2020	2021
1	Երևան	236	104
2	Արագածոտն	170	20
3	Արարատ	40	0
4	Արմավիր	1197	312
5	Գեղարքունիք	434	59
6	Լոռի	53	3
7	Կոտայք	224	66
8	Շիրակ	203	30
9	Սյունիք	310	18
10	Վայոց Ձոր	193	83
11	Տավուշ	229	5
Ընդամենը		**3289**	**700**

2021 թվականի ընթացքում Տեսչական մարմնի տարածքային բաժինների (տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են մարզերի տարածքով անցնող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներին տեղադրված գովազդային վահանակների օրինականության նկատմամբ վերահսկողական միջոցառում:

Հաշվետու ժամանակաշրջանում տարածքային բաժինների մասնագետների կողմից գույքագրվել են միջպետական ավտոճանապարհներին ապօրինի տեղադրված ընդհանուր թվով 599 գովազդային վահանակներ (2019 թվականի ընթացքում գույքագրվել է թվով 369 գովազդային վահանակ, իսկ 2020 թվականի ընթացքում գույքագրվել է թվով 665 գովազդային վահանակ):

Հ/Հ	Մարզեր	Ապօրինի տեղադրված գովազդային վահանակների քանակը	
		2020	2021
1	Երևան	0	1
2	Արագածոտն	26	81
3	Արարատ	81	70
4	Արմավիր	33	33
5	Գեղարքունիք	254	105
6	Լոռի	53	16
7	Կոտայք	60	57
8	Շիրակ	26	19
9	Սյունիք	34	110
10	Վայոց Ձոր	76	45
11	Տավուշ	22	62
Ընդամենը		665	599

Հիմք ընդունելով ՀՀ տարածքում գործող տեխնիկական զննման կայաններում 2020 թվականի ընթացքում տեխնիկական զննություն անցած տրասպորտային միջոցների թվաքանակի վերլուծության արդյունքները՝ Տեսչական մարմնի տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից 2021 թվականի ընթացքում իրականացվել է 171 դիտարկում (2019 թվականին՝ 66 և 2020 թվականին՝ 107):



Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի և Տրանսպորտային անվտանգության վարչության մասնագետների մասնակցությամբ ZOOM համակարգի միջոցով անց է կացվել խորհրդակցություն COVID-19 դեմ պայքարի միջոցառումների շրջանակում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի մասնագետների, ՃՈ աշխատակիցների հետ համատեղ մշտադիտարկումներ իրականացնելու վերաբերյալ, որից հետո տարածքային բաժինների մասնագետները, համագործակցելով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, ինչպես նաև ՀՀ ՃՈ աշխատակիցների հետ, դիտարկումներ են իրականացնում հանրային տրանսպորտում հակահամաճարակային կանոնների պահպանման վերաբերյալ: Տեսչական մարմնի կողմից դիտարկումները կրում են շարունակական բնույթ: 2021թ. ընթացքում ՀՀ ՃՈ աշխատակիցների հետ համատեղ իրականացվել է 9998 մշտադիտարկում և կազմվել 1229 արձանագրություն:

2020 թվականի ընթացքում կատարվել են բազմաթիվ վերահսկողական միջոցառումներ, այդ թվում ՃՈ հետ համատեղ, որոնց ընթացքում կազմվել է վարչական պատասխանատվության ենթարկելու 306 արձանագրություն և տրվել են պարտադիր կատարման ցուցումներ, բաժանվել են ուղեցույցեր թե՛ տնտեսվարող կազմակերպության ղեկավարներին, թե՛ վարորդներին:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>

ՀՀ տարածքում տեղակայված 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում՝ տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա, նոր կառուցված և վերակառուցված էներգատեղակայանքներում 2021 թվականին իրականացվել է 1678 տեխնիկական ստուգում, որից 912-ը՝ (54.4%) էլեկտրաէներգետիկական և 766-ը՝ (45.6%) գազամատակարարման համակարգերում (2019թ.՝ 1259 տեխնիկական ստուգում, համապատասխանաբար՝ 522 (41.5%) և 737 (58.5%) և 2020թ.՝ 1257 տեխնիկական ստուգում, համապատասխանաբար՝ 655 (52.1%) և 602 (47.9%)):



Արդյունքում տրվել է 1332 (79.4%) գործարկման եզրակացություն, իսկ թվով 346 (20.6%) տեղակայանքների գործարկումներ՝ նախագծի և տեխնիկական կանոնակարգերի

պահանջներին անհամապատասխանության, թերի շինարարական աշխատանքների և ներկայացված տեխնիկական փաստաթղթերի ոչ ամբողջականության համար ակտ-կարգադրագրերով մերժվել են (2019թ.՝ 1102 (87.5 %) գործարկում և 157 (12.5%) մերժում 2020թ.՝ 1046 (83.2 %) գործարկում և 211 (16.8%) մերժում):



Ստորև բերված է գործարկման եզրակացությունների բաշխվածությունն ըստ մարզերի





2021 թվականին էներգատեղակայանքներում գրանցվել 21 <u>մահվան ելքով պատահար,</u> 2020 թվականին՝ 14 դեպք, իսկ 2019 թվականին՝ 20: Մահացու ելքով պատահարների քանակական բաշխվածությունն ըստ մարզերի և տարիների ունի հետևյալ պատկերը՝



Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության սահմանած կարգով մասնագիտական քննություններ են կազմակերպվել և իրականացվել 13 պատահարների վերաբերյալ, ընդ որում՝ Շիրակի մարզում՝ 5, Երևանում՝ 4, իսկ Գեղարքունիքի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերում՝ 1-ական պատահար (2020թ.՝ 19 պատահարների վերաբերյալ, որոնցից 5-ը տեղի էին ունեցել 2019թ., ընդ որում՝ Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերում՝ 3, Լոռու և Արարատի մարզերում՝ 2-ական, Երևանում, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում՝ 1-ական պատահար): Տեսչական մարմնի աշխատակիցները 2020 և 2021 թվականներին մասնակցել են 1-ական համակարգային պատահարի մասնագիտական քննության:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում

Տեսչական մարմնի կողմից հաշվառվել և վերլուծվել է 2021 թվականի ընթացքում ՀՀ-ում տեղի ունեցած 6290 հրդեհի դեպք (նախորդ տարվա 6377 հրդեհի փոխարեն): Հրդեհների ընդհանուր քանակի 63.75%-ը (4010 դեպք) տեղի է ունեցել բուսածածկ տարածքում:



Նախորդ տարվա համեմատ արձանագրվել է հրդեհների ընդհանուր քանակի նվազում 1.4%-ով, իսկ խոտածածկ տարածքներում՝ 5.7%-ով: 886 հրդեհների վերաբերյալ կազմվել են հրդեհա մասին ակտեր: Տեղի ունեցած հրդեհներից զոհվել է 14 (9-ը բնակելի տարածքում, 3-ը՝ ավտոմեքենաներում, 1-ը՝ առևտրի, հանրային սննդի և սպասարկման օբյեկտում, 1-ը՝ այլ նշանակության օբյեկտում), իսկ վնասվածքներ է ստացել 80 մարդ, որից 36-ը՝ բնակելի տարածքում, 28-ը՝ մարդատար մեքենաների հրդեհների հետևանքով:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 672 հրդեհատեխնիկական հետազոտություն (2020թ.-ին՝ 333 ՀՏՀ, 2019թ.-ին՝ 1778 ՀՏՀ) տարբեր բնույթի օբյեկտներում, ընդ որում ՀՏՀ-ների ընդհանուր քանակի 15.6% (105 ՀՏՀ) կատարվել է Արարատում գտնվող օբյեկտներում, ևս 105-ը (15.6%)՝ Արմավիրի, 94 հետազոտություն (14.0%)՝ Կոտայքի, 80 (11.9%)՝ Գեղարքունիքի, 70 (10.4%)՝ Սյունիքի, 67 (10.0%)՝ Շիրակի, 53 (7.9%)՝ Տավուշի, 36 (5.4%)՝ Արագածոտնի, 21 (3.1%)՝ Վայոց Ձորի, 16 (2.4%)՝ Լոռու մարզերում և 25 (3.7%)՝ Երևանում:

Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել և տրամադրվել է 681 եզրակացություն նախագծային փաստաթղթերի հակահրդեհային պահանջների համապատասխանելիության վերաբերյալ: 2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել և տրամադրվել է 493 եզրակացություն, իսկ 2019 թվականին՝ 414 եզրակացություն :

Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 761 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին, որից 347-ը (45.6%) Երևանում: 2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 672 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին, որից 307-ը (45.7%) Երևանում: 2019 թվականի ընթացքում Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 287 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին, որից 180-ը (63%)՝ Երևանում:



Հրդեհ ազդարարող համակարգերի շահագործման վերաբերյալ 2021 թվականին տրամադրվել է 7 եզրակացություն, 2020 թվականին՝ 19, իսկ 2019-ին՝ 13:

Քաղաքաշինության բնագավառում

2021 թվականի ընթացքում կատարվել են 2560 վերահսկողական միջոցառում, որից 747-ը ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում, որն ըստ մարզերի ունի հետևյալ գրաֆիկական պատկերը՝



2020 թվականի նույն ժամանակահատվածում կատարվել են 2880 վերահսկողական միջոցառումներ (2019 թվականին՝ 2749), որոնցից 903-ը (2019 թվականին՝ 594) ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում՝



Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականի ընթացիկ տարվա առաջին կիսամյակում ուսումնասիրվել է ՀՀ ողջ տարածքում գործող 1170 օբյեկտ՝ թեքահարթակների առկայությունը և դրանց գործող նորմերի պահանջներին համապատասխանությունն պարզելու նպատակով:

Ըստ մարզերի ուսումնասիրված օբյեկտներն ունեն հետևյալ բաշխվածությունը.



Կատարված աշխատանքի արդյունքում պարզվել է, որ ցանկում ներառված օբյեկտների 7 տոկոսը չի գործում, 69-ը՝ չունի թեքահարթակ, 14-ի թեքահարթակները չեն համապատասխանում նորմերի պահանջներին: Եվ միայն օբյեկտների 10 տոկոսն ունի նորմերին համապատասխանող թեքահարթակներ:

Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 2889 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին, այդ թվում Երևանում՝ 900 (31,15%), Կոտայքում՝ 337 (11,66%), Արարատում՝ 255 (8,83%), Արագածոտնում՝ 273 (9,45%), Արմավիրում՝ 236 (8,17%), և այլն՝ ըստ պատկերի:



Ստորև ներկայացվում է տվյալ ոլորտում կատարած աշխատանքների համեմատական պատկերն ըստ տարիների.



Հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է ավարտական ակտերի վերաբերյալ 1748 դրական և 1026 բացասական եզրակացություն, որոնք ըստ մարզերի այն ունեն հետևյալ գրաֆիկական բաշխվածություն.





2020 թվականի համեմատությամբ 2021 թվականի նույն ժամանակահատվածում տրամադրվել են 506-ով ավելի, իսկ 2019-ի համեմատությամբ՝ 1112-ով ավելի ավարտական ակտերի վերաբերյալ եզրակացություններ։

Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից վերահսկողական աշխատանքների

ընթացքում հայտնաբերվել է 481 ինքնակամ կառույց ՀՀ ամբողջ տարածքում, այդ թվում Երևանում՝ 81 (17%), Շիրակի մարզում՝ 29 (6%), Լոռու մարզում՝ 67 (14%), Գեղարքունիքի մարզում՝ 4 (1%), Կոտայքի մարզում՝ 47 (10%), Արագածոտնի մարզում՝ 94 (19%), Սյունիքի մարզում՝ 4 (1%), Տավուշի մարզում՝ 28 (6%), Արարատի մարզում՝ 50 (10%), Վայոց ձորի մարզում՝ 38 (8%) և Արմավիրի մարզում՝ 39 (8%):





2021 թվականի ընթացքում հայտնաբերված ինքնակամ կառույցների ընդհանուր քանակը 51-ով ավելի է, քան 2020 թվականի նույն ժամանակահատվածում բացահայտվածը, իսկ 70-ով ավելի քան 2019-ին: Ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ բացահայտված խախտումները վերացնելու ուղղությամբ, այն է՝ մարզպետներին և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին տրամադրվել են իրազեկող բնույթի գրություններ: Համայնքների ղեկավարներին ներկայացվել են առաջարկություններ՝ իրենց իրավասության սահմաններում ինքնակամ շինարարական աշխատանքները դադարեցնելու վերաբերյալ և հետևանքները վերացնելու ուղղությամբ:Իրավապահ մարմիններին և ՀՀ դատախազություն է ներկայացվել հաղորդում՝ քաղաքաշինության նորմերի խախտումների վերաբերյալ՝ ինչպես կառուցապատողների կողմից, այնպես էլ համայնքների ղեկավարների անգործության վերաբերյալ:

4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հանրության կողմից հասցեագրվել է ընդհանուր առմամբ 704 բողոք, որից 502-ը (71,3%) վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 74-ական (10,5%)՝ տրանսպորտի անվտանգության և հրդեհային և տեխնիկական անվտագության, 35-ը (4,97%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 19-ը (2,7%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին:



2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հանրության կողմից հասցեագրվել է ընդհանուր առմամբ 476 բողոք, որից 314-ը (66%) վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 77-ը (16,2%)՝ տրանսպորտի անվտանգության, 41-ը (8,6%)՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 25-ը (5,2%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 19-ը (4%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին:

2021 և 2020 թվականների ընթացքում ստացված բողոքների համեմատական գրաֆիկն ունի հետևյալ արտացոլումը.



2021 թվականի ընթացքում բողոքների 28,55%-ը ընդամենը 201 ստացվել է թեժ գծով, ընդ որում ըստ ոլորտների ստացված բողոքների քանակն ունի հետևյալ բաշխվածությունը.



Ըստ ամիսների հանրությունից ստացված բողոքներն ունեն հետևյալ բաշխվածությունը՝

	տրանսպորտ		քաղշին		հրդեհային		էներգետիկա		գեոդեզիա	
	2020թ	2021թ	2020թ	2021թ	2020թ	2021թ	2020թ	2021թ	2020թ	2021թ
հունվար	4	9	7	19	8	2	1		1	2
փետրվար	3	4	15	33	9	8		4	1	2
մարտ	3	4	25	28	5	5	3	1		1
ապրիլ	2	5	6	45		1	1	5		1
մայիս	4	3	22	44		1	3	1	2	1
հունիս	19	6	49	44	2	5	1	6	3	3
հուլիս	13	14	58	45	8	7	1	5	1	3
օգոստոս	8	6	59	89	2	12	4	4	4	
սեպտեմ.	14	9	53	47	5	16	5	5	5	2
հոկտեմբեր	2	7	11	44	1	8	4	3		
նոյեմբեր	1	4	6	20	1	4	1		1	
դեկտեմբեր	4	3	3	44		5	1	1	1	4
	77	74	314	502	41	74	25	35	19	19

2021 թվականին ստացված բողոքների ընդհանուր քանակի 62,07%-ը ընդամենը 437 վերաբերում է Երևանում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին կամ գտնվող օբյեկտներին: Ստորև բերված է բողոքների բաշխվածության գրաֆիկն ըստ տարածքային միավորների.



2021 թվականի ընթացքում ստացված 704 բողոքներից, հիմնավոր է 415-ը (58,94%), որոնցից 2021 թվականին լուծում է ստացել 264-ը (հիմնավոր բողոքների 63,61%): Ստորև բերված է նշված երեք ցուցանիշների բաշխվածությունն ըստ բնագավառների՝



<u>Տրանսպորտային անվտանգության բնագավառում</u>

2021 թվականին տրանսպորտի ոլորտի վերաբերյալ Տեսչական մարմին հասցեագրված 74 դիմում-բողոքներում բարձրացված խնդիրների կարգավորման ուղղությամբ տրանսպորտային անվտանգության վարչության, Երևանի, Արագածոտնի, Արմավիրի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի և Արարատի տարածքային բաժինների տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են առարկայական ուսումնասիրություններ, դիտարկումներ և վերահսկողական գործառույթներ: Բարձրացված խնդիրները հիմնականում վերաբերում են.

- ✓ չվացուցակների խախտումներին- թվով 27,
- ✓ փոխադրավարձի բարձրացմանը- թվով 13,
- ✓ երթուղիների թերի շահագործմանը կամ չշահագործմանը- թվով 5,
- ✓ երթուղու ուղեգծի շեղումներ- թվով 5,
- ✓ գերբեռնվածություն- թվով 4 և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում ստացված բողոքներից 59-ը (79,73%) ներկայացվել է թեժ գծով: Հանրությունից ստացված հիմնավոր 50 դիմում-բողոքներից լուծում են ստացել 43-ը (86%), հիմնավոր չի 23 բողոք (ընդհանուր քանակի 31%): Բողոքի հիման վրա ստուգում չի իրականացվել:

2020 թվականին տրանսպորտի ոլորտի վերաբերյալ Տեսչական մարմին հասցեագրված 77 դիմում-բողոքներում բարձրացված խնդիրների կարգավորման ուղղությամբ տրանսպորտային անվտանգության վարչության, Երևանի, Արագածոտնի, Արմավիրի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի և Արարատի տարածքային բաժինների տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են առարկայական ուսումնասիրություններ, դիտարկումներ և վերահսկողական գործառույթներ: Բարձրացված խնդիրները հիմնականում վերաբերում են

- ✓ երթուղիների թերի շահագործմանը կամ չշահագործմանը,
- ✓ տրանսպորտային միջոցների սխալ կահավորմանը,
- ✓ չվացուցակների խախտումներին,
- ✓ ապօրինի ուղևորափոխադրումներին,
- ✓ սանիտարական կանոնների խախտմանը, ախտահանիչ նյութերի բացակայությանը, ուղեսրահում պաշտպանիչ դիմակներ չկրելու դեպքերին և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում ստացված բողոքներից 55-ը (71,4%) ներկայացվել է թեժ գծով: Հանրությունից ստացված հիմնավոր 58 գրություններից և դիմում-բողոքներից լուծում են ստացել՝ 47-ը (81%), հիմնավոր չի 16 բողոք (ընդհանուր քանակի 20,8%):

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>

2021 թվականի ընթացքում հանրությունից ստացված 35 դիմում-բողոքներից 26-ը (74,28%) հիմնավոր են, 8-ը (22,8%)՝ ոչ հիմնավոր: Հիմնավոր բողոքներից 21-ը լուծում է ստացել (հիմնավորների 80,76%), 5-ն ընթացքի մեջ են:



Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների դիմումներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են.

✓ մայրուղային գազատարների և էլեկտրահաղորդման օդային գծերի անվտանգության գոտիներում իրականացվող շինարարական աշխատանքներին,

✓ առանց սեփականատիրոջ հետ սահմանված կարգով համաձայնեցնելու՝ սեփականաշնորհված հողամասերի տարածքով գազատարների անցկացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում թեժ գծով բողոքներ չեն արձանագրվել: Բողոքի հիման վրա ստուգում չի իրականացվել:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հանրությունից ստացված 25 դիմում-բողոքներից 22-ը (88%) հիմնավոր էին, 3-ը (12%)՝ ոչ հիմնավոր: Հիմնավոր բողոքներից 18-ը լուծում էին ստացել (82%):

<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում</u>

2021 թվականի ընթացքում քաղաքացիներից, իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ստացվել է 74 դիմում-բողոք, որից 63-ը Երևանում գտնվող օբյեկտների վերաբերյալ, 3-ական՝ Կոտայքի և Լոռու մարզերում, 2-ական՝ Արմավիրի և Արարատի մարզերում և 1-ը Շիրակի մարզում: Թեժ գծով ստացվել է 22 բողոք (ընդհանուր քանակի 29,73%): Բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հիմնավոր են 35-ը, ինչը կազմում է ընդհանուր քանակի 47,3 %, հիմնավոր չեն 31-ը (ընդհանուր քանակի 42%), ևս 20 բողոք գտնվում է ուսումնասիրության ընթացքում: Հիմնավոր բողոքներից 23-ը (հիմնավորների 65,71%) լուծում է ստացել: Հանրությունից ստացված 8 բողոքի հիման վրա իրականացվել են ստուգումներ:

Բողոքներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են.

- գոյություն ունեցող և նոր կառուցվող շինությունների միջև հակահրդեհային միջտարածության խախտումներին,
- գործող օբյեկտներում հրդեհային անվտանգության պահանջների խախտումներին:

2020 թվականի ընթացքում քաղաքացիներից, իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ստացվել է 41 դիմում-բողոք, որից 26-ը Երևանում գտնվող օբյեկտների վերաբերյալ, 4-ը՝ Արագածոտնի, 3-ական՝ Արմավիրի և Լոռու մարզերում և մեկական՝ Կոտայքի,

Վայոց ձորի և Տավուշի մարզերում: Բողոքների 36,6 %-ը (15-ը) ստացվել է թեժ գծով: Ստացված բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հիմնավոր են 26-ը, ինչը կազմում է ընդհանուր քանակի 63,4 տոկոսը, հիմնավոր չեն՝ 11-ը, ևս 4 բողոք գտնվում է ուսումնասիրության ընթացքում: Հիմնավոր բողոքներից 7-ը (27%) լուծում է ստացել: Հանրությունից ստացված 2 բողոքի հիման վրա, որից մեկը ստացվել է թեժ գծով, իրականացվել են ստուգումներ: Կատարված ստուգումների և հետազոտությունների արդյունքում բացահայտված խախտումների վերաբերյալ կազմվել է 10 արձանագրություն:

<u>Քաղաքաշինության բնագավառում</u>

Նշված ժամանակահատվածում Տեսչական մարմինը ուսումնասիրել է իրեն հասցեագրված քաղաքաշինական ոլորտին առնչվող ընդհանուր առմամբ 502 դիմում-բողոք, որից 120-ը ստացվել է թեժ գծով (23,9%) : Բողոքներում նշված հասցեներում կատարվել է մասնագիտական տեղազննություն, ստուգվել է իրականացվող շինարարական աշխատանքների, առկա քաղաքաշինական փաստաթղթերի տրման օրինականությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին: Հիմնավոր են 296 բողոք (ընդհանուր քանակի 59%), ոչ հիմնավոր՝ 162-ը (ընդհանուր քանակի 32,3%), լուծում է ստացել 172-ը (հիմնավոր բողոքների 58,11%), իսկ 164-ը գտնվում է ընթացքի մեջ:

Ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ խնդրահարույց և առավել կրկնվող քաղաքաշինական ոլորտում հանդիպող խնդիրները հիմնականում վերաբերվում են.

- ՀՀ կառավարության N 596 որոշմամբ հաստատված կարգերի շեղումներով համայնքների ղեկավարների կողմից ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրմանը
- համայնքների ղեկավարների կողմից նախագծման թույլտվությանը (ճարտարապետահատակագծային առաջադրանքին) հակասող նախագծերի համաձայնեցմանը
- կառուցապատողների կողմից նախագծային շեղումներով իրականացվող շինարարական աշխատանքներին:

Նախորդ տարվա ընթացքում Տեսչական մարմինը ուսումնասիրել է իրեն հասցեագրված քաղաքաշինական ոլորտին առնչվող ընդհանուր առմամբ 314 դիմում-բողոք: Դիմումներում նշված հասցեներում կատարվել է մասնագիտական տեղազննություն, ստուգվել է իրականացվող շինարարական աշխատանքների, առկա քաղաքաշինական փաստաթղթերի տրման օրինականությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին: Հիմնավոր էին 252 դիմում, ոչ հիմնավոր՝ 49, լուծում էին ստացել 150-ը (հիմնավոր բողոքների 60%), իսկ 113-ը գտնվում էին ընթացքի մեջ: Բողոքներից 72-ը ստացվել էին թեժ գծով:

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

2021 թվականի ընթացքում հանրությունից ստացված 19 դիմում-բողոքներից 8-ը (42,1%) հիմնավոր են, 2-ը (10,52%)՝ ոչ հիմնավոր: Հիմնավոր բողոքներից 5-ը լուծում է ստացել (62,5%), 10-ն ընթացքի մեջ են: Թեժ գծով բողոք չի ստացվել: Հանրությունից ստացված բողոքների հիման վրա իրականացվել է 3 ստուգում:

Դիմում-բողոքներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են՝

- ✓ ապօրինի հողամասի օտարմանը,
- ✓ համայնքային հողերի վրա ինքնակամ կառուցապատմանը,
- ✓ ապօրինի շինթույլտվություններին,
- ✓ հողերի համադրմանը:

2020 թվականի ընթացքում Տեսչական մարմին հասցեագրվել էր 19 դիմում-բողոք, որոնցից հիմնավոր էին 9, ոչ հիմնավոր՝ 10 բողոք, 6-ի հիման վրա կատարվել էին ստուգումներ: Բոլոր հիմնավոր բողոքները լուծում էին ստացել:

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2021 թվականի ընթացքում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում հրապարակվել է 198 հաղորդագրություն, որից ընդհանուր գործունեությանը վերաբերող աշխատանքային հանդիպում-քննարկումների, այցերի, ժողովների վերաբերյալ հաշվետու կիսամյակում ՏՄ պաշտոնական կայքէջում տեղադրվել է 17 հաղորդագրություն:

ՔՏՀԱՏՄ-ի կողմից նկարահանվել է 4 իրազեկող բնույթի տեսահոլովակ:

Լրատվամիջոցներից, անհատ լրագրողներից, ՀԿ-երից, այլ կառույցներից ստացվել է թվով 62 գրավոր հարցում, որոնց տրվել են լիարժեք պատասխաններ:

Լրատվամիջոցի հրապարակման հիման վրա նշված ժամանակահատվածում տրվել է 4 պաշտոնական պարզաբանում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկումների ընթացքում արխիվավորվել է ՔՏՀԱ տեսչական մարմնի գործունեության ոլորտներին վերաբերվող ընդհանուր թվով 1579 լրատվական հրապարակում:

Տպագիր և առցանց ԶԼՄ-երով իրականացվել է 21 հարցազրույց: Կազմակերպվել և իրականացվել է ընդհանուր թվով 45 հեռուստառեպորտաժ: Կազմակերպվել է 7 ռադիոելույթ՝ Տեսչական մարմնի գործունեության 5 ոլորտների վերաբերյալ՝ Տեսչական մարմնի ղեկավարի, տեղակալների, ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ: Լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա պատրաստվել է 9 զեկուցագիր:

Վերոգրյալից բացի կատարվել է ծավալուն աշխատանք ըստ վերահսկողության ոլորտների

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

2021 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից խորհրդատվություն է տրամադրվել 465 տնտեսավարողներին և քաղաքացիներին, որից 285 դեպքում՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ, 180 դեպքում՝ տնտեսավարող սուբյեկտների կամ քաղաքացիների պահանջով: 2020 թվականի նույն ժամանակահատվածում խորհրդատվություն է տրամադրվել 435 տնտեսավարողներին և քաղաքացիներին, որից 207 դեպքում (47.6%)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ, 228 դեպքում (52.4%)՝ տնտեսավարող սուբյեկտների կամ քաղաքացիների պահանջով: 2019 թվականին խորհրդատվություն է տրամադրվել թվով 212 տնտեսավարողներին և քաղաքացիներին, որից 82 դեպքում (38,7%)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ:



2021 թվականին իրազեկման նպատակով կազմակերպվել է 372 հանդիպում, որոնցից 106-ը (28,5%) Վայոց Ձորի, 84-ը (22,6%) Կոտայքի, 55-ը (14,8%)՝ Արարատի, 52-ը (13,98%)՝ Սյունիքի, 35-ը (9,4%)՝ Արագածոտնի մարզերում, 22-ը (6%)՝ Երևանում և 10-ը (4,72%)՝ Արմավիրի մարզում: Միաժամանակ ուղարկվել են նաև 113 նախազգուշացնող բնույթի գրություններ:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է իրազեկող, նախազգուշացնող բնույթի *3 հրապարակում՝* միջմարզային և ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ընկերությունների կողմից փոխադրավարձի անհարկի բարձրացման, ուղևորներին, կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող տնտեսավարողներին և ֆիզիկական անձանց՝ հանրային տրանսպորտից օգտվելիս հակահամաճարակային կանոնների պահպանման, և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի և ճանապարհային ոստիկանության հետ համատեղ վերահսկողական աշխատանքների վերսկսկման վերաբերյալ:

Զանգվածային լրատվության հասանելի միջոցներով իրականացվել են իրարզեկող բնույթի աշխատանքներ, մասնավորապես՝

- 128 հոդված Տեսչական մարմնի պաշտոնական կայքում,
- 13 տպագիր հարցազրույց ԶԼՄ-երին,
- 22 հեռուստաելույթ
- 34 ուղիղ եթեր
- 3 ռադիոելույթ:

2020 թվականի ընթացքում խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ էին իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով: Մասնավորապես, Տրանսպորտի անվտանգության բնագավառի վերաբերյալ պատրաստվել էր 65 ռեպորտաժ, որից 21 հեռուստատեսությամբ՝ 21 հարցազրույց, 44-ը ռեպորտաժ՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, Տրանսպորտային անվտանգության բնագավառի վերաբերյալ ՏՄ պաշտոնական կայքում ՝ 109 հոդված, ԶԼՄ-երում հրապարակվել է 318 հոդված): Տեսչական մարմնի պաշտոնական կայքում՝ Տրանսպորտի անվտանգության բնագավառի վերաբերյալ կատարվել էր 4 իրազեկող բնույթի հրապարակում: Հաղորդագրությամբ նշված իրազեկող բնույթի հրապարակումները ուղարկվել են մի շարք ԶԼՄ-երի, որի արդյունքում արխիվավորվել է ԶԼՄ-երի կողմից հրապարակված 13 իրազեկող նորություն: Ուղարկվել են նաև 861 նախազգուշացնող բնույթի գրություններ և 1585 ծանուցումներ:

2019 թվականի ընթացքում ուղարկվել են իրազեկող բնույթի 149 գրություն և 354 ծանուցում:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>

2021 թվականի ընթացքում խորհրդատվություն է տրամադրվել 653 տնտեսավարողի և քաղաքացու (2020 թվականին՝ 324 և 2019 թվականին՝ 129), ընդ որում՝ 254 դեպքում (38,9%) Տեսչական մարմնի նախաձեռնությամբ (2020թ՝ 213): Տնտեսավարողների և քաղաքացիների

կողմից տրված հարցերը հիմնականում կապված են ՀՀ տարածքում 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու գործընթացի հետ, որն իրականացվում է համաձայն 2004թ. դեկտեմբերի 14-ի «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին կետի գ) ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի թիվ 739-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 5-ի N 1423-Ն որոշումների։

2021 թվականին իրազեկելու նպատակով կազմակերպվել է 199 հանդիպում, որից 72-ը (36,18%)՝ Գեղարքունիքի, 69-ը (34,67%)՝ Սյունիքի, 52-ը (26,13%)՝ Վայոց Ձորի, 5-ը (2,5%)՝ Արարատի, 1-ը (0.52%)՝ Շիրակի մարզերում։ 2020 թվականի ընթացքում իրազեկելու նպատակով կազմակերպվել է 116 հանդիպում, որից 38-ը (32,7%)՝ Սյունիքի, 36-ը (31%)՝ Արարատի, 24-ը (20,1%)՝ Լոռու և 18-ը (16,2%)՝ Վայոց Ձորի մարզերում:

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում հրապարակվել է 12 հաղորդագրություն։ Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է ոլորտի վերաբերյալ 17 լրատվական հրապարակում։ Ոլորտի վերաբերյալ կազմակերպվել է 1 հեռուսատելույթ։

2020 թվականին Տեսչական մարմնի պաշտոնական կայքում տեղադրվել է Էներգետիկայի և էներգասպառման ոլորտին վերաբերող 4 հաղորդագրություն։ Տպագիր լրատվամիջոցներով հրապարակվել է 30 մամուլի հաղորդագրություն նկարահանվել է 1 տեսահոլովակ՝ https://www.youtube.com/watch?v=devd0V-NLuk::

2019 թվականի ընթացքում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում հրապարակվել է Էներգետիկայի և էներգասպառման ոլորտին վերաբերող 13 հաղորդագրություն, տպագիր և առցանց տարբեր լրատվամիջոցներով՝ 10 մամուլի հաղորդագրություն։

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

ՔՏՀԱՏՄ աշխատակիցների կողմից 2021 թվականի ընթացքում ընթացքում կատարված ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ ստուգումների հետ միաժամանակ, համայնքների ղեկավարներին և համապատասխան բաժինների պաշտոնատար անձանց տրվել են ոլորտի հետ կապված իրենց հետաքրքրող հարցերի պատասխաններ, ինչպես նաև 41 խորհրդատվություն, որից 7-ը (17%) տնտեսավարող սուբյեկտի կամ քաղաքացու նախաձեռնությամբ։ Խորհրդատվության հիմնական թեմաները վերաբերում են.

- ✓ հողային հաշվեկշիռը (բալանսը) ճիշտ կազմելուն (ՀՀ կառավարության 23.10.2000թ. «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 31.05.2005թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների, մարզերի և Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռները կազմելու մասին հրահանգները հաստատելու մասին» թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգ),
- ✓ աճուրդային փաթեթների պարունակությանը (ՀՀ «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 12.04.2001 թ. «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշման 3-րդ կետի ա) և գ) ենթակետեր),
- ✓ հողերի նպատակային նշանակությունը փոխելու համար՝ միջգերատեսչական հանձնաժողով ուղարկվող փաթեթների պարունակության, նպատակային և գործառնական հողատեսքերի կարգավիճակը փոխելուն՝ (ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշում):

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում տեղադրվել էր 14 հոդված: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում ոլորտի վերաբերյալ արխիվավորվել էր 95 հաղորդագրություն: Տպագիր ԶԼՄ-երին տրվել էր 7 հարցազրույց: Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում տեղադրվել էր 10 (2019 թվականին՝ 15) հոդված, տպագիր և առցանց տարբեր լրատվամիջոցներով հրապարակվել էր 84 (2019 թվականին՝ 36) հաղորդագրություն:

<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում</u>

Տեխնիկական և հրդեհային անվտանգության հարցերով 2021 թվականի ընթացքում տրամադրվել է խորհրդատվություն 2120 տնտեսավարողի և քաղաքացու, որից 59,19%-ը կատարվել է տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների նախաձեռնությամբ: 2020 թվականի ընթացքում տեխնիկական և հրդեհային անվտանգության հարցերով տրամադրվել է խորհրդատվություն 1567 տնտեսավարողների և քաղաքացիների: Կատարված աշխատանքի 68,3% դեպքերում խորհրդատվությունը տրվել է տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների պահանջով: Մինչդեռ 2019 թվականի 1175 խորհրդատվությունների 991-ը (84,34%) տրամադրվել է Տեսչական մարմնի նախաձեռնությամբ:

Տնտեսավարողների և քաղաքացիների կողմից առավել հաճախ տրվող հարցերը վերաբերում են հրդեհային և տեխնիկական անվտանգության օրենսդրության պահանջների խախտումներին, այդ թվում՝ օբյեկտների միջև հակահրդեհային միջտարածություններին, հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերի առկայության պահանջներին (ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015թ. հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված՝ հրդեհային անվտանգության կանոնների հավելված 1 գլուխ 7), կրակմարիչների քանակին (ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015թ.

հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված՝ հրդեհային անվտանգության կանոնների հավելված 1 բաժին VIII):

Նշված ժամանակահատվածում կազմակերպվել է խորհրդատվական և իրազեկող բնույթի 148 հանդիպում, 4 հեռուստառադիոելույթ, հարցազրույց՝ 3 տպագիր հոդված, ՏՄ պաշտոնական կայքում տեղադրվել է 15 հոդված: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է ոլորտի վերաբերյալ 77 լրատվական հրապարակում:

Պատրաստվել է ոլորտային իրազեկող 2 տեսահոլովակ՝

- Հրդեհային անվտանգության կանոնների և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների պահպանման վերաբերյալ- (https://www.youtube.com/watch?v=WmJSgnH3Mco):

- Օբյեկտներում հրդեհային անվտանգության ապահովման գործընթացի կազմակերպման պատասխանատվության վերաբեյալ (https://www.youtube.com/watch?v=97LbwNBXMoc)

Խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով (ՏՄ պաշտոնական կայքում՝ 17 հրապարակում, մամուլի մշտադիտարկում՝ 61 հրապարակում, հեռուստառադիոելույթ՝ 3 հարզացրույց): Հրդեհների նախականխման նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև տնտեսավարողներին տրամադրվել է 670 գրություն:

2019 թվականի ընթացքում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում տեղադրվել է 30 հոդված, տպագիր և առցանց տարբեր լրատվամիջոցներով հրապարակվել է 37 հոդված, հեռարձակվել է 8 հարցազրույց:

<u>Քաղաքաշինության բնագավառում</u>

Հաշվետու ժամանակահատվածում խորհրդատվություն է տրամադրվել 1498 տնտեսավարողների և քաղաքացիների, որից 679 դեպքում (45,37%)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ: 2020 թվականի ընթացքում քաղաքաշինության հարցերով տրված 1753 խորհրդատվություններից 1232-ը



(70,3%) տրամադրվել տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների պահանջով:_Մինչդեռ 2019 թվականի 245 խորհրդատվությունների 72,2% (177)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ:





Քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող սուբյեկտներին իրազեկելու նպատակով 2021 թվականի ընթացքում կազմակերպվել է 27 հանդիպում, պատրաստվել է 78 իրազեկող բնույթի գրություն:

2019-2021 թվականների ընթացքում հանրության կողմից առավել հաճախ տրվող հարցերը վերաբերում են.

- ✓ շենք-շինությունների, ինչպես նաև հարակից հողամասերում կառուցվող շենքերի միջև եղած հեռավորություններին՝ հարաչափերին («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 76, 79, 80, 81 կետեր և ՀՀՇՆ 30-01-2014, 26-րդ գլուխ, 439-446 կետեր).
- ✓ բնակարանների լուսավորության և ինսոլացիոն հաշվարկներին. (Արհեստական և բնական լուսավորում ՀՀՇՆ 22-03-2017 շինարարական նորմեր).
- ✓ պատուհաններից դեպի հարևանի տարածք տեսանելիության հետ կապված հարցեր («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 79, 80, 81 կետեր)
- ✓ կառուցապատողների և հարևան շենքերի սեփականատերերի միջև գրավոր համաձայնությունների հետ կապված հարաբերություններին («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 81 կետ և ՀՀՇՆ 30-01-2014, 26-րդ գլուխ, 439-446 կետեր).
- ✓ շենք շինությունների նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխության հարցերին.(ՀՀ կառավարության 02.02.2002թ. N88 որոշմամբ հաստատված կարգի 3.1 և 3.2 կետեր):

2021 թվականի ընթացքում իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության միջոցներով, այն է՝ հեռարձակվել է 9 հեռուստառեպորտաժ և 1 ռադիոելույթ: Տպագիր ԶԼՄ-ին տրվել է 2 հարցազրույց: ՏՄ պաշտոնական կայքում հրապարակվել է 12 հոդված: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում ոլորտի վերաբերյալ արխիվավորվել է 255 հրապարակում: 2020 թվականի նույն ժամանակահատվածում խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով (ՏՄ պաշտոնական կայքում՝ 9 հոդված, մամուլում՝

43 հոդված, հեռաստառադիոելույթ՝ 3 հարցազրույց): 2019թ.խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով (հեռուստատեսությամբ՝ 5 հարցազրույց, մամուլում՝ 39 հրապարակում, ՏՄ պաշտոնական կայքում՝ 27 հրապարակում):

Տեսչական մարմնի գործունեությանը վերաբերող աշխատանքային այլ հանդիպում-քննարկումների, այցերի, ժողովների վերաբերյալ հաշվետու տարում ՏՄ պաշտոնական կայքէջում տեղադրվել է 17 հոդված:

Պաշտոնական պարզաբանում է տրվել ԶԼՄ-երում տեղ գտած թվով 4 հրապարակման:

Կազմակերպվել է ՏՄ մարմնի գործունեության հինգ ոլորտներին վերաբերող ընդհանուր թվով 69 հարցազրույց և 34 ուղիղ եթեր, որից 1-ը վերաբերում է ՏՄ ընդհանուր գործունեությանը:

ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի և ՔՏՀԱՏՄ համագործակցությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից նկարահանվել է 4 իրազեկող բնույթի տեսահոլովակ, որից 1-ը՝ ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի կողմից ստուգումների անցկացման կարգի վերաբերյալ - https://www.youtube.com/watch?v=Rzb-OXh-NMw :

Նշված հոլովակները Հ1, Շանթ, Նոր Հայաստան, Armnews, freenews, kentronTV հ/ընկերությունների հետ ձեռքբերված պայմանավորվածության արդյունքում 3 ամիս օրը 2-3 անգամ ցուցադրվել է նշված հեռուստաընկերություններով:

2021 թվականին բեռնափոխադրող 65 ընկերությունների էլեկտրոնային հասցեներով անհատապես ուղարկվել է տարանցիկ բեռնափոխադրումների համար գանձվող տուրքերի և վճարումների դրույքաչափերի վերաբերյալ հայտարարությունը: Այն տեղադրվել է նաև Տեսչական մարմնի պաշտոնական կայքում, սոցցանցային էջում:

Հրդեհային անվտանգության կանոնների պահպանման և հանրության շրջանում հրդեհավտանգ ժամանակահատվածում քաղաքացիների զգոնությունը, պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով Տեսչական մարմնի և ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի համատեղ աշխատանքի և բանակցության արդյունքում բջջային կապի օպերատորների՝ («Տելեկոմ Արմենիա», «Վիվասել», «Յուքոմ») ձեռք է բերվել համաձայնություն՝հայտարարությունը իրենց բաժանորդների շրջանում տարածելու նպատակով:

Covid-19 համավարակով պայմանավորված ՔՏՀԱՏՄ-ի տրանսպորտի անվտանագության վարչության կողմից հանրային տրանսպորտում անվտանգության կանոններին հետևելու նպատակով՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի, Տեսչական մարմնի և ՀՀ պարեկային ոստիկանության ծառայության հետ համատեղ ամենօրյա գրաֆիկով լուսաբանվել է հանրային տրանսպորտի նկատմամբ իրականացվող վերահսկողության, մշտադիտարկման ընթացքը: Մասնավորապես՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ պատրաստվել է 22 ռեպորտաժ՝հանրային տրանսպորտում COVID-19 վիրուսի

նկատմամբ իրականացվող դիտարկումների և վերահսկողության ընթացքի մասին: Հանրային, Շանթ, Կենտրոն հեռուստաընկերությունների, ինչպես նաև FactorTV և կողմից ապահովվել է ընդհանուր թվով 34 ուղիղ եթեր՝ տրանսպորտի դիտարկման վայրից, առանձին նաև վերահսկողության ընթացքի վրաբերյալ Հ1-ի կողմից պատրաստվել է 22 ռեպորտաժ:

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում կայացվել է 1373 որոշում վարչական տույժ նշանակելու վերաբերյալ, որով սահմանվել է ընդհանուր առմամբ 126130000 ՀՀ դրամ տուգանք: Վարչական տույժերի քանակի բաշխվածությունն ըստ ոլորտների ունի հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Ստորև ներկայացված է 2021 թվականի ընթացքում նշանակված տուգանքների չափերի բաշխվածությունն ըստ ոլորտների.



2021 թվականի ընթացքում պետական բյուջե գանձվել է 83129481 ՀՀ դրամ, որից 49,4%-ը (41070000 ՀՀ դրամ) 2021 թվականին նշանակված, իսկ 47.8%՝ նախորդ տարիների ընթացքում նշանակված տույժերի հիման վրա:

Վարչական վարույթները հիմնականում հարուցվել են Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների իրականացման արդյունքում արձանագրված խախտումների, ինչպես նաև՝ Տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների շրջանակներում Տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարագրերի, ղեկավարի տեղակալի կողմից տրված հանձնարարականների (տրանսպորտային անվտանգության ոլորտում) հիման վրա:

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

2021 թվականի ընթացքում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 636 արձանագրություն, որից 503-ով կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին որոշում, 7-ով կայացվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին որոշում, մնացածը գտնվում են քննության փուլում: Կազմված արձանագրությունների և վարչական տույժ նշանակելու մասին որոշումների քանակի բաշխվածությունն ըստ մարզերի ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



2021 թվականին նշանակվել է ընդհանուր առմամբ 18940000 ՀՀ դրամ տուգանք, որից գանձված է 4830000-ը:

2021 թվականին արձանագրված խախտումները հիմնականում վերաբերում են կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնողների կողմից հաստատված չվացուցակներով ավտոբուսների (միկրոավտոբուսների) մեկնման ժամերը չպահպանելուն, առանց

ճանապարհային թերթիկի կամ ճանապարհային թերթիկում համապատասխան նշումների բացակայությամբ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացմանը և ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումները սպասարկող ավտոտրանսպորտային միջոցներն առանց երթուղին արտահայտող ցուցատախտակի և (կամ) երթուղու չվացուցակի և (կամ) երթուղու սխեմայի (բացառությամբ ներհամայնքային երթուղիների) և (կամ) սպասարկող կազմակերպության անվանման և գտնվելու վայրի նշումով ցուցանակի և (կամ) տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների պահանջներին անհամապատասխան արտաքին և ներքին կահավորմամբ շահագործելուն:

2020 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների ընթացքում տրանսպորտային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել է 307 արձանագրություն (2019 թվականին՝ 298), որից 109-ը (ընդհանուր քանակի 35,5%)՝ Երևանում, 42-ը՝ Արմավիրի, 41-ը՝ Սյունիքի մարզերում և այլն՝ ըստ պատկերի:



2020 թվականի ընթացքում կայացվել է 318 որոշում, որից 257-ը՝ վարչական տույժ նշանակելու մասին, 61-ը՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կարճման մասին: Տրանսպորտի անվտանգության բնագավառում կայացված 12 վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով, 33-ը՝ դատական:

2020-2021 թվականների ընթացքում կազմված արձանագրությունների և կայացված որոշումների քանակների բաշխվածությունն ունի հետևյալ պատկերը, որը վկայում է, որ արձանագրությունների քանակը աճել է 2 անգամ, իսկ որոշումներինը՝ 1,97 անգամ:



Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում

2021 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում էներգետիկայի ոլորտի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 27 ստուգման ակտ և 13 արձանագրություն, որոնցով կայացվել է 36 որոշում վարչական տույժ նշանակելու մասին և 3 որոշում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին, 1-ը գտնվում է քննության փուլում: Կայացրած որոշումներն ըստ մարզերի ունեն հետևյալ բաշխվածությունը.



Նշանակվել է ընդհանուր առմամբ 1900000 ՀՀ դրամ տուգանք, որից գանձված է 1300000-ը:

Արձանագրված խախտումները վերաբերում են նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքները գործող ցանցերին առանց Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազորված պետական մարմնի գործարկման եզրակացության միացնելուն, ինչպես նաև՝ Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրի պահանջները չկատարելուն:

2020 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում էներգետիկայի ոլորտի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 18 արձանագրություն (2019 թվականին՝ 22), կայացվել է 20 որոշում (2019 թվականին՝ 16) վարչական տույժ նշանակելու մասին, 3 որոշում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին: 2020 թվականին Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում կայացված 2 վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով, 1-ը՝ դատական:

2020-2021 թվականների ընթացքում կազմված արձանագրությունների և կայացված որոշումների քանակների բաշխվածությունն ունի հետևյալ պատկերը, որը վկայում է, որ արձանագրությունների քանակը աճել է 2,2 անգամ, իսկ որոշումներինը՝ 1,8 անգամ:



<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում</u>

Հաշվետու ժամանակահատվածում կայացվել է 376 որոշում վարչական տույժ նշանակելու մասին: Նշանակվել է ընդհանուր առմամբ 45280000 ՀՀ դրամ տուգանք, որից գանձված է 9910000-ը: Արձանագրված խախտումները վերաբերում են ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում, հասարակական վայրերում, պահեստային շենքերում, հանրակացարաններում և բնակելի տներում, ինչպես նաև համապատասխան օբյեկտներ նախագծելիս և կառուցելիս հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու, կամ հակահրդեհային գույքի, սարքավորումների, հրդեհները հայտնաբերելու և հանգցնելու ավտոմատ միջոցների օգտագործման ու պահպանության կանոնները խախտելու դեպքերին, ինչպես նաև արտադրական վտանգավոր օբյեկտները տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրությանը համապատասխան՝ ռեեստրում գրանցման չներկայացնելուն և տեխնիկական անվտանգության փորձաքննություն չիրականացնելուն, ինչպես նաև՝ Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրերի պահանջները չկատարելուն:

2020 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 400 արձանագրություն: Կայացվել էր 413 որոշում, որից 389-ը՝ վարչական տույժ նշանակելու մասին,

15-ը կարճման, 4-ն՝ արտադրական վտանգավոր օբյեկտի գործունեությունը դադարեցնելու մասին, 5-ը՝ փորձագետի նկատմամբ վարչական վարույթ հարուցելու մասին: Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում կայացված 11 վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով, 24-ը՝ դատական:

2019 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 134 արձանագրություն: Տեխնիկական անվտանգության ոլորտում իրականացվել է 36 վարչական վարույթ, կայացվել է 21 որոշում՝ 6-ը կարճման, 15-ը վարչական տույժ նշանակելու մասին: Տեսչական մարմնի դեմ ներկայացվել է 8 հայցադիմում տեխնիկական անվտանգության ոլորտին առնչվող հարցերով, որից 6 դեպքերում բողոքարկվել են տեխնիկական անվտանգության բնագավառներում կայացված որոշումները:

Քաղաքաշինության բնագավառում

Հաշվետու ժամանակահատվածում կայացվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 420 որոշում: Նշանակվել է ընդհանուր առմամբ 49810000 ՀՀ դրամ տուգանք, որից գանձված է 25030000-ը: Արձանագրված խախտումները մեծամասամբ վերաբերում են ճարտարապետահատակագծային առաջադրանքին չհամապատասխանող նախագծերը համաձայնեցնելուն, սահմանված կարգի խախտումներով ճարտարապետահատակագծային առաջադրանքներ տրամադրելուն, կառուցապատողի կողմից առանց համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ իրականացնելուն, օրենքով սահմանված դեպքերում կառուցապատողի կողմից հեղինակային կամ տեխնիկական հսկողության իրականացում չապահովելուն:

2020 թվականի նույն ժամանակահատվածում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 226 արձանագրություն (2019 թվականին՝ 131): Կայացվել է 214 որոշում վարչական տույժ նշանակելու մասին, 1 կասեցման որոշում: Քաղաքաշինության բնագավառում կայացված 7 վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով, 7-ը՝ դատական կարգով:

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում

2021 թվականի ընթացքում Տարեկան ծրագրին համապատասխան իրականացված ստուգումների արդյունքում կայացվել է 38 որոշում՝ վարչական տույժ նշանակելու մասին:

Որոշումների հիման վրա նշանակված գումարը կազմում է 10200000 ՀՀ դրամ, որով 8000000-ը Տարեկան ծրագրով իրականացված ստուգումների հիման վրա, իսկ 2200000-ն՝ ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումներով։



7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

2021 թվականին Տեսչական մարմնի կողմից կայացված վարչական ակտերի դեմ բերվել է 62 վերադաս բողոք:

2020 թվականի Տեսչական մարմնի դեմ բերվել է 32 բողոք վերադասության կարգով: Ըստ վերահսկման առանձին ոլորտների՝ պատկերը հետևյալն է.



Տրանսպորտի անվտանգության բնագավառում

2021 թվականին վերադասության կարգով բողոքարկվել է 46 վարչական ակտ, որից 40-ով որոշում է կայացվել բողոքն առանց բավարարման և որոշումն անփոփոխ թողնելու մասին, 5-ով որոշում է կայացվել որոշումը բեկանելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին, 1-ը՝ ընթացիկ:

2020 թվականին կայացված 12 վարչական ակտ է բողոքարկվել վերադասության կարգով, 12 դեպքում էլ կայացված վարչական ակտերը թողնվել են անփոփոխ:

2019 թվականին բերվել էր 9 վերադաս բողոք, որից 4-ի դեպքում բողոքները մերժվել են, 1-ով՝ բավարարվել, 3-ի դեպքում վարչական գործի վարույթը կարճվել է, 1-ով վարչական գործի վարույթը կասեցվել է:

Բողոքները վերաբերվել են Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողների կողմից փոխադրումներին ներկայացվող պահանջները չկատարելու պահանջին:

Էներգետիկայի բնագավառ և էներգասպառման ոլորտ

2021 թվականի ընթացքում վերադաս բողոքներ չեն ներկայացվել:

2020 թվականի ընթացքում բողոքարկվել է 2 վարչական ակտ, որոնց քննության արդյունքում վարչական ակտերը մի մասով կարճվել, իսկ մի մասով՝ թողնվել են անփոփոխ: Բողոքները վերաբերվել են վարչական ակտերի իրավաչափությանը և դրանց կայացման ժամկետներին:

2019 թվականին Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում բողոքներ չեն ներկայացվել:

Տեխնիկական անվտանգության բնագավառում

2021 թվականի ընթացքում վերադասության կարգով բողոքարկվել է 14 վարչական ակտ, որից 10-ով որոշում է կայացվել կայացված վարչական ակտերն անփոփոխ թողնելու մասին, իսկ 3-ով՝ որոշում՝ կայացված որոշումը բեկանելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին, 1-ը՝ ընթացիկ:

2020 թվականին կայացված 11 վարչական ակտ է բողոքարկվել, որոնցից 9-ը թողնվել է անփոփոխ, 1-ը՝ կարճվել է, քանի որ բողոքարկվել է միաժամանակ և՛ դատական, և՛ վերադասության կարգով, 1-ը կարճվել է ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի ուժով, համաձայն որի՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2019 թվականին ներկայացվել է 8 վերադաս բողոք, որոնցից 7-ը մերժվել է և կայացված վարչական ակտերը թողնվել են ուժի մեջ, 1-ը՝ բավարարվել է:

Բողոքները վերաբերել են արտադրական վտանգավոր օբյեկտների գրանցման ռեեստրում գրանցելու պահանջի, տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման, արտադրական վտանգավոր օբյեկտի կամ դրանում առկա տեխնիկական միջոցի, տեխնոլոգիական սարքավորման շահագործումը դադարեցնելու պահանջներին:

Քաղաքաշինության բնագավառում

2021 թվականին քաղաքաշինության բնագավառում վերադասության կարգով բողոքարկվել է 2 վարչական ակտ, որոնցից 1-ով որոշում է կայացվել բողոքն առանց բավարարման և որոշումն անփոփոխ թողնելու մասին, 1-ը գտնվում է քննության փուլում:

2020 թվականին վերադասության կարգով բողոքարկվել է 7 վարչական ակտ, բոլորը կարճվել են: Բողոքները վերաբերվել են վարչական ակտերի իրավաչափությանը և դրանց կայացման ժամկետներին:

2019 թվականին բողոքներ չեն ներկայացվել:

7.1. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Տրանսպորտի անվտանգության բնագավառում

2021 թվականին ներկայացվել է 22 հայցադիմում: 13 դատական գործով վճիռ է կայացվել Տեսչական մարմնի դեմ, 2 հայցադիմումով որոշում է կայացվել հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու մասին, 1-ով՝ հայցադիմումը վերադարձնելու մասին: Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է 4 վերաքննիչ բողոք, քաղաքացու կողմից՝ 1 վերաքննիչ բողոք: Ընթացիկ փուլում գտնվում է 26 դատական գործ:

2020 թվականին 33 հայցադիմում է ներկայացվել: 19 դատական գործով վճիռ է կայացվել Տեսչական մարմնի դեմ, 5-ով Տեսչական մարմնի կողմ, 5-ով վերաքննիչ բողոք է ներկայացվել:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում

2021 թվականի ընթացքում ներկայացվել է 1 հայցադիմում, գտնվում է դատական քննության փուլում: Ընթացիկ փուլում կա 2 դատական գործ:

2020 թվականին ներկայացվել է 1 հայցադիմում, Տեսչական մարմնի դեմ 1 վճիռ է կայացվել, բողքարկվել է վերաքննիչ դատարան, գտնվում է ընթացիկ փուլում:

Տեխնիկական անվտանգության բնագավառում

Նշված բնագավառում ներկայացվել է 42 հայցադիմում, Տեսչական մարմնի դեմ կայացվել է 16 վճիռ, Տեսչական մարմնի օգտին՝ 8 վճիռ, 2-ով դատական գործի վարույթը կարճվել է: Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է 6 վերաքննիչ բողոք, տնտեսավարող սուբյեկտների կողմից՝ 6 վերաքննիչ բողոք: Ընթացիկ փուլում գտնվում է 42 դատական գործ:

2020 թվականին ներկայացվել է 24 հայցադիմում, որոնցից 4-ով վճիռ է կայացվել Տեսչական մարմնի դեմ, Տեսչական մարմնի կողմ՝ 5 վճիռ, վերաքննիչ դատարան բողոքարկվել 1 դատական ակտ:

Քաղաքաշինության բնագավառում

2021 թվականին ներկայացվել է 3 հայցադիմում: 6 դատական գործով վիճռ է կայացվել Տեսչական մարմնի դեմ, 1 դատական գործի վարույթ կարճվել է: Ընթացիկ փուլում գտնվում է 6 դատական գործ:

2020 թվականին_թվով 10 հայցադիմում է ներկայացվել, որոնցից Տեսչական մարմնի դեմ վճիռ չի կայացվել, 1-ի՝ վարույթ ընդունելը մերժվել է:

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում

2021 թվականին ներկայացվել է 8 հայցադիմում: Տեսչական մարմնի դեմ կայացված վճիռներ չկան, Տեսչական մարմնի օգտին կայացվել է 4 վճիռ, 1 դատական գործով որոշում է կայացվել

գործի վարույթը կարճելու մասին, 1 հայցադիմումով որոշում է կայացվել վարույթ ընդունելը մերժելու մասին: Ընթացիկ փուլում գտնվում է 12 դատական գործ:

2020 թվականին 8 հայցադիմում է ներկայացվել, որոնցից Տեսչական մարմնի դեմ կայացված վճիռներ չկան, Տեսչական մարմնի կողմ՝ 3 վճիռ, վերաքննիչ դատարան բողոքարկվել է 3 դատական ակտ (որոնք կայացվել են Տեսչական մարմնի օգտին):

2021 թվականին Տեսչական մարմնի դեմ ներկայացվել է 76 հայցադիմում: 2020 թվականին Տեսչական մարմնի դեմ ներկայացվել է 73 հայցադիմում, 2019 թվականին՝ 24: Հայցադիմումները մեծամասամբ վերաբերում են Տեսչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտերի (որոշում, կարգադրագիր, ցուցում) վիճարկմանը: Ներկա պահին ընթացքի մեջ է գտնվում 88 դատական գործ:

8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2021 թվականի ընթացքում Տեսչական մարմինը հանդես է եկել

1. ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 595-Ն հրամանով հաստատված Հրդեհային անվտանգության կանոններում լրացում կատարելու առաջարկությամբ: Առաջարկվել է նշված հրամանով հստակ տարանջատել հրդեհային անվտագության միջոցառումների հետևյալ տեսակները՝ կապիտալ և ռեժիմային: Միաժամանակ, վարձատու և վարձակալ եզրույթներն առաջարկվել փոխարինել գույքի սեփականատեր և գույքն այլ օրինական հիմքով տիրապետող եզրույթներով:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 730-Լ որոշման մեջ լրացում կատարելու մասին առաջարկությամբ: Նախագծի ներկայացումը պայմանավորված է եղել «Գովազդի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի ՀՕ-500-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին 2021 թվականի ապրիլի 15-ի N 386-Ա որոշմամբ, որով նախատեսված է եղել Վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 730-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծ: Նախագծի ընդունման արդյունքում ապահովվել է սոցիալական գովազդը գովազդի այլ տեսակներով փոխարինվելու դեպքում գովազդի տեղադրման թույլտվության տրամադրման և բովանդակության նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացումը:

3. Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին առաջարկությամբ: Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի 15-րդ հոդվածը լրացնել 8.[1]-ին մասով.

8.[1] Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրի պահանջը կարգադրագրում սահմանված ժամկետում արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի (պարտավոր անձ) կողմից չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում կարգադրագրի պահանջը ենթակա է կատարման Տեսչական մարմնի կողմից (փոխարինող գործողություն)՝ պարտավոր անձի հաշվին:

Պարտավոր անձը նախազգուշացվում է փոխարինող գործողության կիրառման հնարավորության մասին:

Փոխարինող գործողությունը կատարվում է առանց պարտավոր անձի՝ դրա կատարման օրվա և ժամի մասին նախնական ծանուցման: Փոխարինող գործողության կատարման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն, որի օրինակելի ձևը հաստատվում է տեսչական մարմնի ղեկավարի կողմից:
Փոխարինող գործողության կատարման կարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից::

4. Հրդեհային անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին առաջարկությամբ: Հրդեհային անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության 2005 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-176 օրենքի 20-րդ հոդվածը լրացնել ժ) կետով.
ժ) Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրի (որոշման) պահանջը կարգադրագրում (որոշման մեջ) սահմանված ժամկետում այն կատարել պարտավոր քաղաքացիների և պաշտոնատար անձանց (պարտավոր անձ) կողմից չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում կարգադրագրի (որոշման) պահանջը ենթակա է կատարման Տեսչական մարմնի կողմից (փոխարինող գործողություն)՝ պարտավոր անձի հաշվին:
Պարտավոր անձը նախազգուշացվում է փոխարինող գործողության կիրառման հնարավորության մասին:
Փոխարինող գործողությունը կատարվում է առանց պարտավոր անձի՝ դրա կատարման օրվա և ժամի մասին նախնական ծանուցման: Փոխարինող գործողության կատարման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն, որի օրինակելի ձևը հաստատվում է տեսչական մարմնի ղեկավարի կողմից:
Փոխարինող գործողության կատարման կարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից::
Նախագծերի ընդունման արդյունքում Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը հնարավորություն կունենա ապահովելու իր կողմից տրված կարգադրագրերի/որոշումների հարկադիր կատարումը, նվազագույնի հասցնել տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտների օրենսդրության պահանջների խախտումների վտանգավորության ռիսկը:

5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի առաջարկությամբ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 11-րդ գլուխը լրացնել նոր՝ 157.17-րդ հոդվածով.
«Հոդված 157.17. Առանց ավարտական ակտով փաստագրման՝ ավարտված շինության շահագործումը չկանխելը

Առանց ավարտական ակտով փաստագրման ավարտված շինության շահագործումը չկանխելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:»:
Հոդված 2. *Օրենսգրքի 17-րդ գլխի 244[11]-րդ հոդվածի 1-ին մասում «157.1-157.14-րդ» բառերից հետո «և» բառը փոխարինել «,» կետադրական նշանով:*
Հոդված 3. *Օրենսգրքի 17-րդ գլխի 244[11]-րդ հոդվածի 1-ին մասը «157.16-րդ» բառերից հետո լրացնել «և 157.17-րդ» բառերով:*
Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է քաղաքաշինական գործունեության նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու նպատակով առկա օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին պետական հարկադրանքի երաշխիքով օժտելու անհրաժեշտությամբ: Նախագծի ընդունման արդյունքում կապպահովի քաղաքաշինական գործունեության նկատմամբ պատշաճ վերահսկողությունը:

6. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1025-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի առաջարկությամբ: 2020 թվականի դեկտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 և 2007 թվականի հունիսի 21-ի N 819-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1994-Ն որոշումը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել փոփոխել նաև ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1025-Ն որոշմամբ հաստատված նախկին ստուգաթերթը: Նախագծի ընդունման արդյունքում տրանսպորտի ոլորտում իրականացվող ստուգումների ստուգաթերթը համապատասխանեցվել է գործող օրենսդրությանը և 2020 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունված N 1994-Ն որոշմանը:

7. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N 1106-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի առաջարկությամբ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N 1106-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատվել է ծանրաքաշ բեռներ փոխադրելու համար օգտագործվող կամ ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված եզրաչափերը գերազանցող կամ երկու և ավելի կցորդների հետ միասին ավտոգնացքի կազմում շահագործվող տրանսպորտային միջոցների երթևեկության կանոնները և չմասնատվող բեռներ փոխադրող թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող և (կամ) մեկ սռնու վրա

ընկնող բեռնվածքը գերազանցող և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով փոխադրումների իրականացման երթուղու տրամադրման թույլտվության կարգը, տրանսպորտային միջոցների թույլատրելի առավելագույն զանգվածը և (կամ) մեկ սռնու վրա ընկնող բեռնվածքը, ինչպես նաև մեծ եզրաչափերի առավելագույն զանգվածները և չափերը հաստատելու մասին թույլտվության տրամադրման կարգը։ Նշված որոշման մեջ առկա են վրիպակներ և տեխնիկական սխալներ, որոնք վերահսկողություն իրականացնելիս խոչընդոտներ են առաջացնում։ Որոշման մեջ առկա թերությունները փաստի առաջ են կանգնեցնում նաև տնտեսավարող սուբյեկտներին, ովքեր՝ իրավական ակտի ոչ հստակության պատճառով չեն կարողանում համապատասխան վարքագիծ դրսևորել։ Նախագծի ընդունման արդյունքում վերացվել են Որոշման մեջ առկա թերությունները և տեխնիկական վրիպակները, ապահովվել է տրանսպորտի բնագավառի վերահսկողության անխոչընդոտ իրականացումը, տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն է տրվել իրավական ակտին համապատասխան վարքագիծ դրսևորել։

Հաշվետու ժամանակահատվածում Վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համատեղ մշակվել է «Տրանսպորտի բնագավառում պետական վերահսկողության մասին» օրենքի նախագիծ։

9. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2021 թվականին բացահայտվել և/կամ շարունակում են արդիական մնալ հետևյալ ռիսկերը.

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

- Ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) միջպետական ուղևորափոխադրումների իրականացումը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1587-Ն որոշման պահանջներով: Անհրաժեշտ է ապահովել բացառապես տվյալ միջպետական երթուղու մրցույթով ընտրված տրանսպորտային միջոցների շահագործումը, ուղևորների անվտանգությունը և սպասարկման պատշաճ մակարդակը:
- Տրանսպորտային միջոցների կուտակման վայրերից իրականացվող տաքսամոտորային ուղևորափոխադրումների խնդիրները պայմանավորված են առանց լիցենզիայի, առանց համապատասխան կահավորման, առանց սակաչափիչի կամ էլեկտրոնային հավելվածով գործող գնացուցակի ծառայության մատուցմամբ:
- ՀՀ տարածքում Հայավտոկայարան ՓԲ ընկերության ենթակայության ավտոկայարաններում, ավտոկայաններում և երթակարգավարական կետերում միջմարզային, ներմարզային, կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառի խնդիրները վերաբերում են երթուղիների սպասարկման չվացուցակներով հաստատված փոխադրումների կազմակերպման ժամային գրաֆիկի պահպանման, ավտոկայարանային ծառայությունների մատուցման, ուղեբեռի ժամանակավոր պահպանման, ուղևորների նստեցման և երթևեկության անվտանգության ապահովման կազմակերպման գործընթացներին:
- 2021 թվականի ընթացքում ներհամայնքային կանոնավոր երթուղիների պատշաճ սպասարկումն ապահովելու համար Երևան քաղաքում և ՀՀ մյուս խոշոր բնակավայրերում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում կազմվել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 433 արձանագրություն, սակայն, նշված էական բարելավում չի արձանագրվել՝ թերի գործիքակազմի պատճառով: Անհրաժեշտ է լրացուցիչ և/կամ ավելի խիստ վերահսկողական մեխանիզմների կիրառում օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված տույժերի չափերի բարձրացում:
- 2021 թվականի ընթացքում հանրությունից ստացված դիմում-բողոքներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են միջմարզային կանոնավոր երթուղիների սպասարկման չվացուցակների անհստակությանը, զուգահեռ շահագործվող երթուղիների չվացուցակների կրկնությանը, փոխադրողների կողմից չվացուցակների պահանջների պարբերաբար խախտումներին, մրցույթային հանձնաժողովի սահմանված փոխադրավարձի գերազանցմամբ

երթուղիների սպասարկման իրականացմանը, ինչպես նաև որոշ կանոնավոր երթուղիների ուղեգծերով բազմաթիվ ոչ կանոնավոր և ապօրինի տաքսամոտորային տրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրումների իրականացմանը:

- Ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկման գործընթացների ռիսկայնությունը պայմանավորված է թույլատրելի բեռնվածության զանգվածի գերազանցման հետ, ինչն առաջացնում է ավտոճանապարհների ասֆալտապատ ծածկույթի լուրջ վնասվածքներ, ինչպես նաև պարունակում է լրջագույն ռիսկեր՝ կապված տրանսպորտային միջոցի անվտանգ երթևեկության հետ: Տվյալ ոլորտում վերահսկողությանը խոչընդոտող հիմնական պատճառներն են նյութատեխնիկական ռեսուրսների (ծանրաքարշ բեռնատարներով փոխադրվող բեռնվածքի քաշի կշռման համար անհրաժեշտ ճշտության կշեռքների ապահովում և այդ նպատակով ավտոճանապարհներին առանձնացված հատուկ գրպանիկների առկայություն, վտանգավոր բեռների փոխադրումների վերաբերյալ Լիազոր մարմնի և «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության տեղեկատվության էլեկտրոնային բազաներին առցանց միացում և այլն) պակասին, աշխատանքների ծավալի անհամապատասխանությունն անձնակազմի թվաքանակին:
- «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի միջպետական երթուղիների ուղևորների տոմսավորումն իրականացվում է բացառապես ավտոկայարանների և ավտոկայանների, ինչպես նաև դրանց հետ պայմանագիր ունեցող այլ կազմակերպության տոմսարկղերից: Օրենսդրության սույն պահանջի անտեսումը առաջացնում է միջպետական տվյալ երթուղով մեկնող ուղևորների պատշաճ սպասարկմանը և անվտանգության ապահովմանն առնչվող խնդիրներ, ինչպես նաև հավասար մրցակցային պայմանների ապահովում:
- *Երկաթուղային տրանսպորտով փոխադրման գործընթացի հետ կապված տեխնիկական միջոցների շահագործման և երթևեկության ոլորտում ռիսկայնությունը կապված է երկաթուղային տրանսպորտի շահագործման և երթևեկության անվտանգության կանոնների խախտումների հետ, բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և վերացման, բեռնատար վագոնների ու բեռնարկղերի բեռնման ու բեռնաթափման աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպման հետ:

*Տվյալ գործառույթը հնարավոր է կատարել միայն համապատասխան օրենսդրական փոփոխությունների և համապատասխան մասնագետների համալրման պարագայում

- Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության ռիսկերը ուղղակիորեն կապված են տրանսպորտային միջոցների շահագործման և փոխադրումների իրականացման անվտանգության կանոնների խախտումների հետ: 2021 թվականի ընթացքում ՀՀ-ում գործող թվով 47 տեխնիկական զննության կայանում իրականացվել են մշտադիտարկումներ: Մշակվել է տեխնիկական զննության կայանի ստուգում իրականացնելու համար նախատեսված ստուգաթերթ, որը հաստատման փուլում է: Ռիսկի վրա հիմնված ստուգումներ պլանավորելու և իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ ՀՀ կառավարության կողմից հաստատված մեթոդաբանություն:

➢ Համաձայն ««Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, որն ուժի մեջ է մտել 2021 թվականի օգոստոսի 16-ից, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցներում տեղադրվող գազաբալոնային սարքավորումների տեղադրմանը, գազաբալոնների պարբերական վկայագրմանը և դրանց լցավորմանը ներկայացվող պահանջների նկատմամբ վերահսկողությունը վերապահվել է Տեսչական մարմնին, սակայն մինչ օրս առկա չեն լիցենզավորման կարգը, գազալցման կայաններին ներկայացվող պահանջները և այլն: Համապատասխան մեթոդաբանության հիման վրա կատարված ռիսկայնության հաշվարկի և ստուգաթերթի բացակայությունը խոչընդոտում է տվյալ գործառույթի իրականացմանը:

➢ ՀՀ տարածքից և դեպի ՀՀ տարածք իրականացվող միջպետական, կանոնավոր, ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ, ինչպես նաև ելնելով ԵԱՏՄ կանոնակարգերի պահանջներից, տեսչական մարմնին օրենսդրորեն վերապահվել է ՀՀ սահմանային անցման կետերում ամենօրյա 24 ժամյա հերթափոխային աշխատանքային ռեժիմով վերահսկողական գործառույթների լիազորություններ 2022 թվականի հունվարի 1-ից, սակայն մինչ օրս օրենսդրական դաշտը կարգավորված չէ, որի բացակայությունն էլ խոչընդոտներ է ստեղծում տվյալ գործառույթի իրականացման համար:

➢ Տեսչական մարմնի ուշադրության շրջանակում շարունակում են մնալ ՀՀ միջպետական, հանրապետական և մարզային ենթակայության տեղական նշանակության պետական ավտոճանապարհներին (ներառյալ պաշտպանական գոտիներում) տեղադրված գովազդները (գովազդային վահանակները): 2021 թվականի ընթացքում տարածքային բաժինների մասնագետների կողմից գույքագրվել է միջպետական ավտոճանապարհներին ապօրինի տեղադրված ընդհանուր թվով 382 գովազդային վահանակ, կազմվել է 155 արձանագրություն:

➢ Համապատասխան մեթոդաբանության հիման վրա կատարված ռիսկայնության հաշվարկի և ստուգաթերթի բացակայությունը խոչընդոտում է ԵԱՏՄ մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների նկատմամբ հսկողության իրականացմանը, որի օրենսդրական դաշտը մինչ օրս կարգավորված չէ:

<u>Էներգետիկայի բնագավառ և էներգասպառման ոլորտ</u>

➢ Ներկայումս էներգետիկայի բնագավառում գործող մի շարք տեխնիկական կանոնակարգեր, որոնք հաստատվել են Ստանդարտացման մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, ուժը կորցրել են պայմանավորված նոր օրենքի ընդունմամբ: Համաձայն Տեխնիկական կանոնակարգման մասին ՀՀ օրենքի՝ ծառայություններին և արտադրանքին ներկայացվող պահանջների սահմանազատմամբ պայմանավորված, նշված տեխնիկական կանոնակարգերը նոր օրենսդրությամբ չեն կարող հանդիսանալ որպես տեխնիկական կանոնակարգեր և, հետևաբար, չեն կարող գրանցվել ոլորտի կանոնակարգումն իրականացնող համակարգող մարմնի կողմից վարվող տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյանում, որի հետևանքով իրավական դաշտը բաց կմնա: Հաշվի առնելով այն

հանգամանքը, որ էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործառույթները հիմնված են վերոգրյալ տեխնիկական կանոնակարգերի վրա, դրանց ուժը կորցրած ճանաչելու դեպքում, Տեսչական մարմինը հնարավորություն չի ունենա իրականացնել օրենքով իրեն վերապահված գործառույթները:

➢ Վերջին տարիներին ստացվող տեղեկությունների վերլուծությունը վկայում է, որ էլեկտրաէներգետիկական համակարգում մահացու ելքով պատահարների շուրջ 97 տոկոսը տեղի է ունենում 6, 10/0.4 կՎ, ինչպես նաև 35 կՎ լարման ենթակայաններում և 6 կՎ, 10 կՎ, 35 կՎ լարման օդային գծերի տակ:

➢ Վերջին տարիներին ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում տեղի ունեցած մահացու ելքով պատահարների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների կողմից ստացված դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքների վերլուծությունից պարզվել է, որ դրանց զգալի մասը տեղի են ունեցել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» («ՀԷՑ») ՓԲԸ-ի կողմից օգտագործվող մի շարք 6, 10/0.4 կՎ, ինչպես նաև 35 կՎ լարման ենթակայաններում և 0.4 կՎ, 6 կՎ, 10 կՎ, 35 կՎ լարման օդային գծերում, որտեղ առկա են էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների, էլեկտրահաղորդաբաշխման, շահագործման անվտանգության և էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով ներկայացված պահանջների կոպիտ խախտումներ: Դրանց մի մասը փաստացի չեն գտնվում «ՀԷՑ» ՓԲ ընկերության հաշվեկշռում, սահմանված կարգով չեն իրականացվում տեխնիկական սպասարկման, պլանային նորոգման, էներգահամակարգի հարաչափերին չհամապատասխանող սարքավորումների վերականգնման, արդիականացման կամ փոխարինման աշխատանքներ, ընկերությունը պատասխանատվություն չի կրում դրանց անմխիթար վիճակի համար, սակայն դրանք օգտագործվում է ընկերության կողմից իր սպառողներին (բաժանորդներին) էլեկտրաէներգիա մատակարարելու համար: Նշված էլեկտրատեղակայանքները նախկինում պատկանել են այգեգործական ընկերություններին կամ այլ կազմակերպություններին, իսկ այժմ դրանք համարվում են տիրազուրկ: Առկա են նաև փաստացի տնտեսվարող սուբյեկտներին պատկանող ենթակայաններ, որոնց էլեկտրատեղակայանքները առանց համատեղ շահագործման և անվտանգության կանոնների պահպանման պարտավորությունների վերաբերյալ կնքված պայմանագրերի միաժամանակ օգտագործվում են նաև «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից իր սպառողներին (բաժանորդներին) էլեկտրամատակարարումն ապահովելու համար: Ստեղծված իրավիճակը մեծ ռիսկեր է պարունակում՝ սպառնալով մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին:

➢ Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասնագիտական քննությունների վերլուծությունները ցույց են տալիս, որ գազամատակարարման բնագավառում մահացու ելքով բոլոր պատահարները տեղի են ունենում գազի ներտնային գազասպառման համակարգում:

➢ Հայաստանի Հանրապետությունում առկա են էլետրահաղորդման օդային գծերի (այսուհետ՝ ՕԳ), էլեկտրահաղորդման մայրուղային գծերի (այսուհետ՝ ՄԳ), գազատարների և մայրուղային գազատարների անվտանգության գոտիների բազմաթիվ խախտումներ: Դեռևս խորհրդային տարիներից ի վեր ՀՀ-ում առկա են բազմաթիվ շենք շինություններ և այլ տնտեսական գործունեություն իրականացնող ընկերություններին պատկանող կառույցներ,

որոնք գտնվում են վերոնշյալ անվտանգության գոտիներում: Միաժամանակ 1990-ական թվականներից մինչ 2018 թվականը տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների կողմից տրված շինարարության թույլտվության հիման վրա էներգատեղակայանքների անվտանգության գոտիներում կառուցվել են բազմաթիվ շենքեր և շինություններ, որոնք հետագայում սեփականաշնորհվել են կառուցապատողների կողմից: Ստեղծված իրավիճակն անվտանգության տեսանկյունից սպառնալիք է մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին:

➢ Օրենքով և ՔՏՀԱՏՄ կանոնադրությամբ վերապահված գործառույթներն իրականացնելու համար ՔՏՀԱՏՄ Էներգետիկայի և էներգասպառման վարչությունում ու տարածքային բաժիններում անհրաժեշտ մասնագիտական հաստիքների ոչ բավարար քանակը խոչընդոտում է նշված գործառույթների, ինչպես հնարավոր ռիսկերի գնահատման և նվազեցման աշխատանքների լիարժեք իրականացմանը: Մասնավորապես, հնարավոր չէ էներգատեղակայանքներում և դրանց օբյեկտներում առկա ռիսկերը բացահայտելու նպատակով անհրաժեշտ քանակությամբ ստուգումների իրականացումը, տարեկան շուրջ 1200 էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տրամադրելու նպատակով տեխնիկական ստուգումների պատշաճ կարգով իրականացումը, էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասնագիտական քննություններն իրականացնելու համար ստեղծվող հանձնաժողովների կազմերը սահմանված նվազագույն թվով մասնագետներով համալրումը, էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում տեղի ունեցած պատահարների պատշաճ վերլուծությունը, ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունների ու վերապահված այլ գործառույթների և համակարգման այլ գործընթացների պատշաճ իրականացումը:

<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում</u>

➢ Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշմամբ հաստատված ոլորտային ռիսկերի աստիճանը, ինչպես նաև նախորդ տարիների ընթացքում կատարված ստուգումների արդյունքում բացահայտված խախտումների վերլուծությունը՝ 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը կազմելիս՝ շեշտը դրվել է ներքոհիշյալ բարձր ռիսկային ոլորտներում առկա խնդիրները բացահայտելու և անվտանգությունն ապահովելու վրա: Դրանք են՝

- ✓ արտադրական նշանակության օբյեկտներ,
- ✓ բենզալցակայաններ և գազալցավորման կայաններ,
- ✓ առևտրի և հասարակական սննդի օբյեկտներ,
- ✓ պայթուցիկ նյութերի, նավթամթերքի, հեղուկ և բնական գազերի պահեստներ,
- ✓ հրդեհապայթունավտանգ այլ օբյեկտներ:

Վերահսկողության արդյունավետության մակարդակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է մշակել հրդեհային անվտանգության հայեցակարգային մոտեցումներ և ապահովել դրանց կիրարկումը:

- 2021 թվականի ընթացքում ՀՀ մարզերի նախադպրոցական հաստատություններում իրականացված հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ հաստատությունների 92 տոկոսը շահագործվում է հրդեհային անվտանգության կանոնների տարաբնույթ խախտումներով ընդհանուր առմամբ 1847 խախտում, ինչն իրական վտանգ է ներկայացնում մանկապարտեզ հաճախող երեխաների և հաստատությունների անձնակազմի կյանքի և առողջության համար:
- Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում շարունակվող կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված բուժ հաստատություններում մարդկանց զանգվածային ներկայությունը՝ բուժ հաստատությունների հրդեհաանվտագությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է կատարել հրդեհատեխնիկական հետազոտություններ:
- ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության մի շարք որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 634-Ն որոշման համաձայն 2023 թվականի ապրիլի 23-ից հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառի 2 տեխնիկական կանոնակարգ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1101-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2399-Ն որոշումները, որոնց հետ առնչվում է Տեսչական մարմինը, ուժը կորցրած են ճանաչվելու, ինչն առաջացնում է տվյալ ոլորտներում նոր կանոնների ու պահանջների մշակման անհրաժեշտություն, քանի որ ներկայումս գործող ստուգաթերթերում առկա մի շարք պահանջներ կկորցնեն իրենց իրավաչափությունը:
- Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին ՀՀ օրենքում փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից կարևորագույնը արտադրական վտանգավոր օբյեկտների ըստ իրենց ծավալների և վտանգավորության տարանջատումն է և արտադրական վտանգավոր սարքավորում սարք հասկացության ընդգրկումը: Նախատեսվում է նաև վարչական տույժերի չափերի տարանջատում՝ կախված վտանգավոր օբյեկտի սարքի ծավալներից և վտանգավորությունից:
- ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 71-Ն որոշման 3-րդ հավելվածով մի շարք ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին է սահմանվել ՔՏՀԱ տեսչական մարմինը: Ռիսկի վրա հիմնված ստուգումներ իրականացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել տեխնիկական կանոնակարգերը, ներկայացնել համապատասխան առաջարկություններ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը

որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն և ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 1025-Ն որոշումների մեջ համապատասխան լրացումներ կատարելու համար:

- Հասարակական նշանակության օբյեկտներում հրդեհները և վթարները նախականխելու նպատակով նախաձեռնած Հասարակական նշանակության օբյեկտներում հրդեհի և տեխնածին վթարի հետևանքով անձանց կյանքի, առողջության և գույքի ապահովագրության հայեցակարգի նախագծի մշակման աշխատանքներին մասնակցություն:
- ՀՀ վարչապետի 2020 թվականի օգոստոսի 25-ի թիվ 952-Լ որոշմամբ ՔՏՀԱՏՄ լիազորությունները համալրվել են ևս մեկ գործառույթով, այն է՝ տիեզերական գործունեության բնագավառում օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացմամբ, այդ թվում՝ նաև ստուգումների միջոցով, ինչն իր հերթին ենթադրում է ստուգաթերթերի և ռիսկայնության հաշվարկի մեթոդաբանության առկայություն:

<u>Քաղաքաշինության բնագավառում</u>

- Տեսչական մարմնի կողմից 2020-2021 թվականների ընթացքում իրականացված ստուգումները և վերահսկողական միջոցառումները վկայում են, որ քաղաքաշինական գործունեություն իրականացնող սուբյեկտները շինարարական աշխատանքները կատարում են համաձայնեցված նախագծի և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների շեղումներով:
- Դիմում-բողոքների, ինչպես նաև պետական մարմինների կողմից ներկայացված գրությունների հիման վրա կատարված վերահսկողական միջոցառումների արդյունքում՝ համայնքների կողմից տրամադրվող քաղաքաշինական փաստաթղթերում բացահայտվել են բազմաթիվ տարաբնույթ թերություններ և բացթողումներ: Մասնավորապես, համայնքների ղեկավարների կողմից տրամադրվում և համաձայնեցվում են սահմանված կարգի խախտումով նախագծման և շինարարության թույլտվություններ ու համաձայնեցվում են նախագծման թույլտվությանը անհամապատասխան աշխատանքային նախագծեր: Ակնհայտ է ՀՀ համայնքներում, ՀՀ մարզպետարաններում և Երևանի վարչական շրջաններում քաղաքաշինական գործունեության նկատմամբ տարեկան տեսչական ստուգումների անհրաժեշտությունը, որոնք հնարավոր կլինի իրականացնել ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 624 որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացում կատարելուց հետո: Տեսչական ստուգումների շնորհիվ կբարձրանա համայնքների կողմից տրամադրվող քաղաքաշինական

փաստաթղթերի որակը և կնվազեն նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջներով համաձայնեցված աշխատանքային նախագծերի տրամադրման դեպքերը:

- ՀՀՇՆ 30-10-2014 «Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն հրամանում առկա միջտարածությունների վերաբերյալ նորմատիվ պահանջները՝ գոյություն ունեցող քաղաքաշինական միջավայրում (արդեն իսկ բնակելի տներով կառուցապատված միջավայր), կառուցապատողների համար ստեղծում են կառուցապատմանն առնչվող մի շարք խնդիրներ:
- Ստուգումները դեպի առավել ռիսկային ոլորտներ նպատակաուղղելու համար անհրաժեշտ է ներդնել իրավական կարգավորող մեխանիզմ, որը կապահովի համայնքների ղեկավարների կողմից ժամանակին և պատշաճ կերպով լրացված քաղաքաշինական փաստաթղթերի ներկայացումը Տեսչական մարմին:
- Համայնքներում գոյություն ունեցող վարչական շենքերի, թատրոնների, թանգարանների, պետական հիմնարկների, կինոթատրոնների և այլ պետական կառավարման և տեղական կառավարման հիմնարկների հաշմանդամ և սակավաշարժ խմբերի տեղաշարժման մատչելիության ապահովումը:
- Կառուցվող բազմաբնակարան շենքերի ստորգետնյա հարկերում բնակիչների համար նախատեսված ավտոկայանատեղիների ոչ բավարար լինելու պատճառով կից տարածքներում ավտոմեքենաների կայանման պատճառով ներհամայնքային ճանապարհները դառնում են դժվար անցանելի և առաջանում են խցանումներ: Ներկայումս ՀՀ գործող իրավական ակտերով նախատեսված է մինչև 40% կառուցապատում, որը, սակայն, չի բավարարում բազմաբնակարան շենքի բնակիչներին:
- Մասնագետների արհեստավարժության խնդիր՝ հատկապես ստուգում իրականացնելու հարցում: Վերահսկողական աշխատանքների ծավալը և արդյունավետությունը անմիջականորեն կախված են ոչ միայն հսկողություն իրականացնող մասնագետների արհեստավարժությունից, այլև քանակից: Հետևաբար, հաստիքների ավելացումը հնարավորություն կստեղծի քաղաքաշինության բնագավառում հասարակության անվտանգությունն ապահովելու համար:

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

- 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված, ինչպես նաև դիմումների, գրությունների հիման վրա և ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ իրականացված ստուգումների վիճակագրությունը վկայում է, որ հողերի նպատակային նշանակության, գործառնական նշանակության, ապօրինի զավթման, աճուրդների և վարձակալության խախտումները, պաշտոնեական կեղծիքների եղանակով չմասնավորեցվող հողամասերի օտարումը, ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրումը

շարունակում են մնալ հիմնական ռիսկային ուղղությունները: Բնագավառի կարևոր խնդիրներից է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին ոչ պատշաճ ընթացք տալը: Առաջնային խնդիր է նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից օրենսդրությանը հակասող վարքագիծ դրսևորելու դեպքերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անգործության դրսևորումը, ինչն էական վնաս է հասցնում համայնքային և պետական շահերին:

- 2021 թվականի ընթացքում ստացված դիմում-բողոքներից շատերը վերաբերում են հերթապահ կադաստրային քարտեզների վարման աշխատանքների խախտումներին: Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1071-Ա որոշման՝ քարտեզագրական աշխատանքների նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին է ճանաչվել Տեսչական մարմինը: Միևնույն ժամանակ կատարվել են փոփոխություններ «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածում, համաձայն որի գեոդեզիական և քարտեզագրական գործունեության պետական տեսչական վերահսկողությունը կիրականացնի ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը: Սակայն վերահսկողության իրականացման իրատեսական գործիքակազմը բացակայում է:
- Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտում վարչական իրավախախտումների համար կիրառվող պատասխատավության միջոց տուգանքների չափերը համաչափ չեն թույլ տրված խախտումներին, ուստի անհրաժեշտ է սահմանել տուգանքների ավելի մեծ չափեր՝ ոլորտում տեղի ունեցող խախտումների դեմ առավել արդյունավետ պայքարելու և հետագա հնարավոր խախտումները կանխելու համար:
- Վերահսկողական գործառույթների իրականցումը ամբողջ ծավալով հնարավոր է ապահովել անձնակազմի թվաքանակի ավելացման և արդեն իսկ Տեսչական մարմնի կողմից ձեռք բերված անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության օգտագործման առկայության դեպքում:

10. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով Տեսչական մարմինների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի պահանջները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին N 693-Ն որոշման հիման վրա կազմված կատարողականի գնահատման մեթոդոլոգիան (Հավելված 1):